**Հավելված 8**

# Ֆինանսավորման Ուղեցույց

**ՓՄՁ-ՆԵՐԻ ԵՎ ՄԻՋ-ԿԱՊԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


A. ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ..............2

A.1. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ....................................2

A.1.1. Համապատասխան Շահառուներ. ՓՄՁ-ների/Միջ-Կապերի սահմանումը ..........................2

A.1.2. Շահառուների գտնվելու վայրը........................................................................... 5

A.1.3. Բացառված Շահառուները.................................................................................. 5

A.1.3.1. ԵՆԲ-ի բացառման քաղաքականությունը ......................................................... 5

A.1.3.2. Բացառված ոլորտները ..................................................................................... 5

A.1.3.3. Բացառված գործունեությունները..................................................................... 6

A.1.4. Լիզինգային ընկերությունը որպես Շահառու..................................................................7

A.1.5. Ֆինանսավորումը վարձակալության միջոցով.................................................................7

A.1.6. Կանաչ նպատակները ........................................................................................ 8

A.1.7. Գենդերային հավասարությունը և կանանց տնտեսական հզորացումը ............................ 8

A.2. ԵՆԹԱՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ................................ 9

A.2.1. Ընդհանուր պայմանները..................................................................................... 9

A.2.2. Համապատասխանեցումը Փարիզի համաձայնագրին ..................................................10

A.2.3. Ենթանախագծերի իրականացման վայրը ...................................................................14

A.2.4. Համապատասխանություն ներպետական օրենսդրությանը և ԵՆԲ-ի պահանջներին......14

A.2.4.1 Շրջակա միջավայր .............................................................................................14

A.2.4.2 Գնումներ..............................................................................................................14

A.3. ԵՆԹԱՆԱԽԱԳԾԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.............................................................................................................15

A.3.1. Ընդունելի ծախսերի կատեգորիաներ ..........................................................................15

A.3.2. Ոչ ընդունելի ծախսերի կատեգորիաներ.......................................................................16

A.4. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԵՆԹԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ 16

A.4.1. Շահառուներին տրվող ենթաֆինանսավորման չափը ...................................................16

A.4.2. Շահառուներին տրվող ենթաֆինանսավորման ժամկետները ........................................17

B. ԵՆԲ ՎԱՐԿԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ....................................................................18

B.1. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՇԱՀԱՌՈՒԻՆ ԵՆԲ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ .......................................................................................................18




FB_Internal

B.1.1. Շահառուին տեղեկատվության տրամադրման եղանակը և այդ տեղեկատվության բովանդակությունը ....................................................................................................18
B.1.2. Վարկառուի/Միջնորդի և ԵՆԲ-ի կայքերում պարունակվող տեղեկատվությունը ..............18
B.2. ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ.........................................19
C. ԵՆԹԱՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ......20
C.1. ԵՆԹԱՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԳՀՀ/ԵՆԲ.............................20
Հավելված 2 Բնապահպանական գնահատման ուղեցույց.................................................. 21
Հավելված 2(ա) Ծրագրեր, որտեղ պահանջվում է ՇՄԱԳ.................................................. 21
Հավելված 2(բ) Ծրագրեր, որտեղ ՇՄԱԳ սքրինինգի վերաբերյալ պահանջվում է իրավասու մարմնի որոշումը ....................................................................................................24
Հավելված 3. Կանաչ ներդրումների աղյուսակ 2022..................................................26

## A. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ԵՆԲ ֆինանսավորման համապատասխանության չափանիշները սահմանվում են հետևյալ իմաստներով՝

(1) Շահառուների համապատասխանության չափանիշներ (A.1.)
(2) Ենթանախագծերի համապատասխանության չափանիշներ (A.2.)
(3) Ենթանախագծի ծախսերի կատեգորիաների համապատասխանության չափանիշներ (A.3.)
(4) Ֆինանսավորման չափ և ժամկետ (A.4.):

ԵՆԲ-ից ֆինանսավորում ստանալու համար պետք է բավարարվեն սույն Ֆինանսավորման ուղեցույցով Շահառուի, Ենթանախագծի և ֆինանսավորման համար սահմանված համապատասխանության բոլոր չափանիշները:

### A.1. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

#### A.1.1. Համապատասխան Շահառուներ. ՓՄՁ-ների/Միջ-Կապերի սահմանումը

**Համապատասխան Շահառուները** փոքր և միջին ձեռնարկություններ են (ՓՄՁ), որոնք սահմանվում են որպես 250-ից պակաս աշխատակից ունեցող (լրիվ դրույքին համարժեք) ձեռնարկություններ, կամ «Միջ-Կապեր», որոնք սահմանվում են որպես նվազագույնը 250 և ոչ ավելի քան 3000 աշխատակից ունեցող (լրիվ դրույքին համարժեք) ձեռնարկություններ:

**Ձեռնարկությունը** տնտեսական գործունեությամբ զբաղվող կազմակերպություն է՝ անկախ իրավական ձևից՝ այդպիսով ներառելով նաև կանոնավոր կերպով տնտեսական գործունեությամբ զբաղվող ընտանեկան ֆիրմաները, գործընկերությունները, ազատ մասնագետները և ասոցիացիաները: Ինքնազբաղված անձինք համապատասխան Շահառուներ են, եթե գրանցված են բիզնես ռեգիստրում և ունեն ԱԱՀ համար:

**Ձեռնարկության ՓՄՁ/Միջ-Կապի կարգավիճակը** հաստատելու համար վերջինիս աշխատողների թիվը հաշվարկվում է 2005թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած Միկրո, փոքր



FB_Internal

և միջին ձեռնարկությունների սահմանման մասին Եվրոպական հանձնաժողովի թիվ 2003/361/ԵՀ առաջարկության համաձայն («ԵՀ առաջարկություն»)[1]:

Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում (ա) **հիմնական աշխատողները** և (բ) **փոխկապակցված ձեռնարկությունների աշխատողները՝ ըստ ինքնավար, գործընկեր և փոխկապակցված ձեռնարկությունների՝ ԵՀ սահմանումների**, ինչպես ներկայացված է ստորև բերված աղյուսակում: Ֆիզիկական անձանց միջոցով ձեռնարկությունների միջև փոխհարաբերությունները նույնպես հաշվի են առնվում, եթե ձեռնարկությունները փոխկապակցված են (տես՝ ստորև բերված աղյուսակը) և եթե նրանք գործում են նույն շուկայում կամ հարակից շուկաներում: Աշխատողների ընդհանուր թիվը պետք է լինի 250-ից պակաս ՓՄՁ-ի դեպքում և 3000-ից պակաս՝ Միջ-Կապերի դեպքում:

| | |
|---|---|
| Ինքնավար ձեռնարկություններ | Ձեռնարկությունը համարվում է ինքնավար, եթե այն չունի մեկ կամ մի քանի այլ ձեռնարկությունների կապիտալի կամ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 25%-ը կամ ավելին (որը որ ավելի բարձր է), և ոչ մի այլ ձեռնարկություն չունի իր կապիտալի կամ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 25%-ը կամ ավելին (որը որ ավելի բարձր է):<br><br>Բացառություն՝<br>Ձեռնարկությունը դեռևս համարվում է ինքնավար, եթե դրա կապիտալի կամ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 50%-ը պատկանում է հետևյալ գերիշխող ազդեցություն չգործող ներդրողներին՝ պետական ներդրումային կորպորացիաներ, վենչուրային կապիտալի ընկերություններ և բիզնես հրեշտակներ, համալսարաններ և շահույթ չհետապնդող հետազոտական կենտրոններ, ինստիտուցիոնալ ներդրողներ, ներառյալ տարածաշրջանային զարգացման հիմնադրամները, 5000-ից պակաս բնակիչ ունեցող բնակավայրերի տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնց տարեկան բյուջեն չի գերազանցում 10 միլիոն եվրոն:<br><br>Ինքնավար ձեռնարկությունների աշխատողների քանակը հաշվելիս հաշվի են առնվում միայն այդ ձեռնարկության աշխատողները:<br>**Նշում**՝ Ձեռնարկությունը կորցնում է իր **ՓՄՁ/միջին կապիտալի ձեռնարկության կարգավիճակը** այն դեպքում, երբ մեկ կամ մի քանի պետական մարմիններ ձեռք են բերում դրա կապիտալի կամ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 25%-ը կամ ավելին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ձեռնարկությունը վերը նշված բացառության դեպքերից է, ինչի դեպքում նշված շեմը մինչև 50% է: |
| Գործընկեր ձեռնարկություններ | Ձեռնարկությունը համարվում է գործընկեր ձեռնարկություն, եթե դրան է պատկանում մեկ կամ մի քանի այլ ձեռնարկությունների կապիտալի կամ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առնվազն 25%-ը, բայց ոչ ավելին, քան 50%-ը (որը որ ավելի բարձր է) և/կամ մեկ այլ ձեռնարկության է պատկանում դրա կապիտալի կամ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առնվազն 25%-ը, բայց ոչ ավելին, քան 50%-ը (որը որ ավելի բարձր է): |

[1] Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրի O124, 2003թ. մայիսի 20, էջ 36-41 (http://ec.europa.eu/growth/smes/business-friendly-environment/sme-definition_en).



FB_Internal

| | |
|---|---|
| | Գործընկեր ձեռնարկությունների աշխատողների քանակը հաշվելիս հաշվի են առնվում այդ ձեռնարկության աշխատողների թիվը գումարած<br>գործընկեր ձեռնարկություններից յուրաքանչյուրի աշխատակիցների թվի համապատասխան մասը՝ ըստ այդ ձեռնարկությանը պատկանող բաժնեմասի/ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տոկոսի: Պետք է ավելացվեն բոլոր այն գործընկեր ձեռնարկությունների տվյալները, որոնք տվյալ ձեռնարկության բաժնետոմսերի սեփականատեր են կամ որոնց բաժնետոմսերից պատկանում են տվյալ ձեռնարկությանը: |
| Փոխկապակցված ձեռնարկություններ | Երկու ձեռնարկություն համարվում են փոխկապակցված, եթե մեկը մյուսին ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում է կապիտալի կամ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի մեծամասնության կամ պայմանագրի կամ համաձայնագրի միջոցով գերիշխող ազդեցություն գործադրելու ունակության միջոցով: ԵՄ անդամ պետությունների մեծ մասում փոխկապակցված ձեռնարկություններից պահանջվում է պատրաստել համախմբված հաշվետվություններ:<br><br>Կապակցված ձեռնարկությունների համար աշխատողների թիվը հաշվարկվում է որպես բուն ձեռնարկության աշխատակիցների թիվը գումարած կապակցված ձեռնարկություններից յուրաքանչյուրի աշխատակիցների ընդհանուր թիվը ամբողջ շղթայում՝ վերևում և ներքևում[2]: |

ԵՀ առաջարկության համաձայն՝ ձեռնարկության աշխատակիցների թվաքանակի հաշվարկի համար օգտագործվող տվյալները վերցվում են վերջին հաստատված հաշվետու ժամանակաշրջանից և հաշվարկվում են տարեկան կտրվածքով: Ինչ վերաբերում է այն ընկերություններին, որոնց աշխատողների թիվը մոտ է առավելագույնին, ԵՀ առաջարկությունը ներառում է դրույթ, ըստ որի ձեռնարկությունը ձեռք է բերում/կորցնում իր ՓՄՁ/միջին կապիտալի ձեռնարկության կարգավիճակը այն դեպքում, երբ երկու հաշվետու ժամանակաշրջան անընդմեջ աշխատողների թվաքանակը թույլատրելի առավելագույնից իջնում/բարձրանում է[3]:

Լրացուցիչ պարզաբանումների և օրինակների համար տես՝ Եվրոպական հանձնաժողովի Ներքին շուկայի, արդյունաբերության, ձեռնարկատիրության և ՓՄՁ-ների (DG GROW) «ՓՄՁ սահմանման մասին ուղեցույց» հրապարակումը[4]:

<u>Քանի որ ինչպես շարադրված է վերը՝ ձեռնարկության ՓՄՁ/միջին կապիտալի ձեռնարկության կարգավիճակը որոշվում է հիմնական աշխատողների և հարակից ձեռնարկությունների աշխատողների քանակի համախմբման հիման վրա, ԵՆԲ-ին ներկայացված ենթավարկի տրամադրման հայտում (տես՝ ենթաբաժին C) վարկառուն հաշվետվություն է ներկայացնում միայն Շահառուի հիմնական աշխատողների թվի վերաբերյալ:</u>

[2] ԵՄ անդամ պետությունների մեծ մասում նման ձեռնարկություններից օրենքով պահանջվում է համախմբված հաշվետվություններ ներկայացնել կամ ամբողջովին ներառվել մեկ այլ ձեռնարկության հաշվետվություններում:

[3] Տես՝ ԵՀ թիվ 2003/361/ԵՀ առաջարկության Հավելվածի հոդված 4.2-ը:

[4] https://ec.europa.eu/growth/smes/business-friendly-environment/sme-definition_en

http://ec.europa.eu/DocsRoom/documents/15582/attachments/1/translations



FB_Internal

### A.1.2. Շահառուների գտնվելու վայրը

Շահառուները պետք է գրանցված լինեն Հայաստանի Հանրապետության տարածքում:

### A.1.3. Բացառված Շահառուները

#### A.1.3.1. ԵՆԲ-ի բացառման քաղաքականությունը

ՓՄՁ-ները/Միջ-Կապերը դուրս են մնում ԵՆԲ-ի ֆինանսավորում ստացող Շահառուների ցանկից այն դեպքում, երբ դրանք ենթակա են բացառման մասին ԵՆԲ-ի որոշմանը, որն ուժի մեջ է համապատասխան ֆինանսավորման վերաբերյալ իրավական փաստաթղթերի ստորագրման պահին: Բացառման մասին ԵՆԲ-ի որոշումները կայացվում են ԵՆԲ-ի Բացառման քաղաքականության համաձայն, որը հրապարակված է ԵՆԲ-ի կայքում (http://www.eib.org/about/accountability/anti-fraud/exclusion/index.htm):

#### A.1.3.2. Բացառված ոլորտները

Համապատասխան ոլորտում (Վարկատուի-ի կողմից Վարկառուին էլեկտրոնային փոստով տրամադրված՝ Տնտեսական գործունեությունների անվանացանկի (NACE[5]) ծածկագրերի ցանկում «0» խումբը) գործունեություն ծավալող ցանկացած Շահառու ընդունելի է ֆինանսավորում ստանալու համար, ընդ որում նրանից չի պահանջվում ենթավարկի տրամադրման հայտում ներառված տեղեկություններից բացի ենթանախագծի մասին այլ լրացուցիչ տեղեկություններ տրամադրել ԵՆԲ/ԳՀՀ-ին (տես՝ ենթաբաժին C)՝ մինչև ենթավարկի տրամադրելը:

Զգայունոլորտում (Վարկատուի-ի կողմից Վարկառուին էլեկտրոնային փոստով տրամադրված՝ Տնտեսական գործունեությունների անվանացանկի (NACE) ծածկագրերի ցանկում «1» խումբը) գործունեություն ծավալող ցանկացած Շահառու ընդունելի է ֆինանսավորում ստանալու համար, ընդ որում նրանից չի պահանջվում ենթավարկի տրամադրման հայտում ներառված տեղեկություններից բացի ենթանախագծի մասին այլ լրացուցիչ տեղեկություններ տրամադրել ԳՀՀ-ին՝ մինչև ենթավարկի տրամադրելը, **եթե ենթանախագծի ընդհանուր արժեքը չի գերազանցում 1.2 միլիոն եվրոն** (կամ դրան համարժեք գումար այլ արժույթով):

Զգայուն ոլորտում գործունեություն ծավալող Շահառուի կողմից իրականացվող 1.2 միլիոն եվրոն գերազանցող ընդհանուր արժեքով ենթանախագծերը ֆինանսավորելու համար ԵՆԲ/ԳՀՀ-ի կողմից սկզբունքորեն պահանջվում է ծրագրի մասին մանրամասն տեղեկատվություն՝ մինչև ենթավարկի տրամադրելը:

Ոչ համապատասխան համարվող որևէ ոլորտում («2» խումբը) գործունեություն ծավալող Շահառուները չեն կարող ֆինանսավորվել:

Մեկից ավելի ոլորտներում գործունեություն ծավալող Շահառուների դեպքում հիմնական գործունեությունը պետք է համապատասխան լինի: Հիմնական գործունեությունն այն գործունեությունն է, որն ամենաշատն է նպաստում Շահառուի ստեղծած ընդհանուր համախառն արժեքին, որը չափվում է գործառնական շահույթով:

Հստակության համար պետք է նշել, որ անկախ միևնույն խմբի ընկերություններում փոխկապակցված կամ գործընկեր ձեռնարկությունների NACE ծածկագրերից՝ այն ֆինանսական հոլդինգային ընկերությունները, որոնց միակ տնտեսական

[5] Եվրոպական միությունում տնտեսական գործունեության վիճակագրական դասակարգում



FB_Internal

գործունեությունն այլ ընկերություններում բաժնետիրական փաթեթի և/կամ ներդրումների պորտֆելներ ունենալը և կառավարելն է, համապատասխան չեն ԵՆԲ-ի ֆինանսավորման համար:

**Անշարժ գույքի հետ կապված գործունեության վերաբերյալ NACE ծածկագրերի բացառությունները**[6]

Այն ձեռնարկությունները, որոնք հիմնադրվել են իրենց դուստր առևտրային ձեռնարկությունների կողմից վարձակալական հիմունքներով օգտագործվելու նպատակով անշարժ գույք (հող և/կամ շինություններ) որպես սեփականություն ունենալու համար, կարող են համապատասխան լինել ենթաֆինանսավորման համար այն դեպքում, երբ՝

I. Անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող ձեռնարկությունը և դրա դուստր առևտրային ձեռնարկությունը պատկանում են նույն խմբին[7], և

II. Առևտրային ձեռնարկությունը հստակորեն հատկորոշված է (վարկառուն պետք է ենթավարկի տրամադրման հայտի ցուցակում նշի առևտրային ձեռնարկության գործունեության NACE ծածկագիրը), և

III. Ենթանախագիծը համապատասխանում է սույն Ֆինանսավորման ուղեցույցով սահմանված համապատասխանության չափանիշներին:

**«Գազի արտադրություն» NACE ծածկագրի հետ կապված բացառությունը**

Այն Շահառուների համար, որոնք իրենց հիմնական գործունեությունն իրականացնում են բացառված թիվ 352100 ոլորտում (գազի արտադրություն), սակայն որոնց համար համապատասխան Ենթանախագիծը բաղկացած է կենսավառելիքի արտադրությունից, ենթավարկի տրամադրման հայտում պետք է Ենթանախագծի համար նշել NACE թիվ 351132 ծածկագիրը (էլեկտրաէներգիայի այլընտրանքային և վերականգնվող աղբյուրներ. կենսավառելիք): Այս ենթածրագրերը համապատասխան են ԵՆԲ-ի ֆինանսավորման համար՝ չնայած այն բանին, որ թիվ 352100 ոլորտը բացառված է:

### A.1.3.3. Բացառված գործունեությունները

Անկախ հիմնական գործունեությանն առնչվող NACE ծածկագրի համապատասխանությունից՝ հետևյալ գործունեություններից որևէ մեկում ներգրավված Շահառուները համապատասխան չեն և չեն կարող դիմել ԵՆԲ-ի ֆինանսավորման համար՝

a) Զենքի և զինամթերքի[8], պայթուցիկ նյութերի, ռազմական կամ ոստիկանական սարքավորումների կամ ենթակառուցվածքների և անհատների իրավունքները և ազատությունները սահմանափակող (օրինակ՝ բանտեր, ցանկացած տեսակի կալանավայրեր) կամ մարդու իրավունքները ոտնահարող սարքավորումների կամ ենթակառուցվածների արտադրությանը կամ առևտրին ուղղված գործունեությունը:

b) Շրջակա միջավայրի վրա այնպիսի ազդեցություններ առաջացնող գործունեությունները, որոնք հիմնականում չեն մեղմացվում և/կամ փոխհատուցվում (ներառյալ, բայց ոչ բացառապես պահպանվող տարածքներում, կրիտիկական կենսամիջավայրերում և բնության ժառանգություն հանդիսացող վայրերում իրականացվող ծրագրերը):

---

[6] Օրինակ՝ “Sociétés civiles immobilières, SCI” (Ֆրանսիա) or Immobiliengesellschaft (Գերմանիա)

[7] Ձեռնարկությունների խումբը ներառում է մայր և դուստր ձեռնարկություններ, որոնք վերահսկվում են նույն սեփականատիրոջ կողմից, ով վերահսկողությունն իրականացնում է կապիտալի կամ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի մեծամասնության միջոցով:

[8] Ներառյալ պայթուցիկ նյութերը և սպորտային զենքերը



FB_Internal

c) Էթիկապես կամ բարոյապես վիճելի համարվող գործունեությունները, օրինակ՝ սեքս-առևտուր և դրան հարակից ենթակառուցվածքներ, ծառայություններ և միջոցներ, կենդանիների վրա փորձարկումներ[9], մարդկանց կլոնավորման վերաբերյալ հետազոտություններ:

d) Ներպետական օրենսդրությամբ արգելված գործունեությունները (միայն այն դեպքում, երբ նման օրենսդրություն գոյություն ունի), օրինակ՝ գենետիկորեն ձևափոխված օրգանիզմներ (ԳՁՕ), հղիության արհեստական ընդհատում կատարող կլինիկաներ, միջուկային էներգիա և այլն:

e) ԵՄ-ում ապրանքային նշանի կամ աշխարհագրական տեղանունների հեղինակային իրավունքը խախտող ապրանքների («կեղծված ապրանքներ[10]») արտադրությանը կամ վաճառքին ուղղված գործունեությունը:

Անկախ հիմնական գործունեությանն առնչվող NACE ծածկագրի համապատասխանությունից՝ այն Շահառուները, որոնց տարեկան հասույթի ավելի քան 10%-ը գոյանում է հետևյալ գործունեություններից, համապատասխան չեն և չեն կարող դիմել ԵՆԲ-ի ֆինանսավորման համար՝

f) Մոլեխաղերի համար նախատեսված և դրանց հետ կապված այլ սարքավորումների արտադրությանը կամ դրանց օգտագործման օժանդակմանն ուղղված գործունեություններ:

g) Ծխախոտի մշակմանը, արտադրությանը, վերամշակմանը կամ ծխախոտային մասնագիտացված արտադրանքի իրացմանը, ինչպես նաև ծխախոտի օգտագործման հեշտացմանը (օրինակ՝ «ծխարաններ») ուղղված գործունեություններ:

### A.1.4. Լիզինգային ընկերությունը որպես Շահառու

Լիզինգային ընկերությունները կարող են լինել Շահառուներ, եթե՝ (ա) դրանք համապատասխանում են վերը սահմանված՝ Շահառուի համապատասխանության չափանիշներին (տես՝ ենթաբաժին A.1.) և (բ) տեղաբաշխումը համապատասխանում է ստանդարտ չափանիշներին: Համապատասխան լիզինգային ընկերությունները կարող են լինել ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ընկերություններ:

### A.1.5. Ֆինանսավորումը վարձակալության միջոցով

[9] Փորձարարական և գիտահետազոտական նպատակներով կենդանիների օգտագործումը ներառող գործունեությունները համապատասխան են այնքանով, որքանով որ համապատասխանում են Եվրոպական խորհրդարանի և Եվրոպայի խորհրդի 2010թ. սեպտեմբերի 22-ի «Գիտահետազոտական նպատակներով օգտագործվող կենդանիների պաշտպանության մասին» թիվ 2010/63/ԵՄ հրահանգի պահանջներին:

[10] «Կեղծված ապրանքներ» մասնավորապես նշանակում է՝

(a) Այն ապրանքները, որոնք խախտում են ապրանքային նշանի հեղինակային իրավունքը այն ԵՄ անդամ պետությունում, որտեղ դրանք հայտնաբերվել են, և առանց համապատասխան թույլտվության պարունակում են նույն տիպի ապրանքների համար օրինականորեն գրանցված ապրանքային նշանի հետ նույնական նշան, կամ հիմնական հատկանիշներով նման ապրանքային նշանից չտարբերվող նշան,

(b) Այն ապրանքները, որոնք խախտում են աշխարհագրական տեղանունների հեղինակային իրավունքը այն ԵՄ անդամ պետությունում, որտեղ դրանք հայտնաբերվել են, և անվանվում կամ բնութագրվում են այդ աշխարհագրական տեղանվան հետ կապված՝ հեղինակային իրավունքով պաշտպանված անվանումով կամ տերմինով,

(c) Ցանկացած փաթեթավորում, պիտակ, կպչուկ, գրքույկ, շահագործման հրահանգ, երաշխիքային փաստաթուղթ կամ այլ նմանատիպ իր (նույնիսկ եթե այն ներկայացված է առանձին), որը խախտում է ապրանքային նշանի կամ աշխարհագրական տեղանունների հեղինակային իրավունքը, որը պարունակում է օրինականորեն գրանցված ապրանքային նշանի կամ հեղինակային իրավունքով պաշտպանված աշխարհագրական տեղանվան հետ նույնական նշան, անուն կամ տերմին, կամ որը հիմնական հատկանիշներով նման ապրանքային նշանից կամ աշխարհագրական տեղանունից չի տարբերվում և որը կարող է օգտագործվել նույն տեսակի ապրանքների համար, ինչի համար որ ապրանքային նշանը կամ աշխարհագրական տեղանունը գրանցված են (Մտավոր սեփականության իրավունքների մաքսային կիրարկման վերաբերյալ Եվրախորհրդարանի և Եվրոպայի խորհրդի 2013թ. հունիսի 12-ի թիվ ԵՄ 608/2013 ժամանակ առ ժամանակ փոփոխած կանոնակարգ - 2013թ. հունիսի 29-ի ԵՄՊՏ O181, էջ 15):



FB_Internal

Շահառուներին տեղաբաշխումներ կատարելու՝ սույն Ֆինանսավորման ուղեցույցով սահմանված բոլոր չափանիշները վերաբերում են նաև վարձակալության միջոցով ֆինանսավորմանը: Դրանցից բացի՝ պետք հաշվի առնել նաև հետևյալ առանձնահատկությունները՝

a) Ինչպես գործառնական[11], այնպես էլ ֆինանսական վարձակալությունները համապատասխան են, եթե ֆինանսավորվող ակտիվն ունի միջինից երկար օգտակար ծառայության ժամկետ,

b) Վարձակալված ակտիվի օգտագործման ընթացքում թույլատրվում է Շահառուի փոփոխություն, եթե նոր Շահառուն համապատասխան է ԵՆԲ-ի ֆինանսավորման համար,

c) Սպառողական վարձակալության ֆինանսավորումը համապատասխան չէ:

Լիզինգային ընկերությունը որպես միջնորդ. լիզինգային ընկերությունները կարող են միջնորդներ լինել Շահառու/վարձակալ հանդիսացող ՓՄՁ-ների/Միջ-Կապերի համար: Որպես միջնորդ հանդես եկող լիզինգային ընկերությունը պետք է իրեն ֆինանսական միջոցներ տեղաբաշխելու նպատակով ներկայացնի ապացույցներ այնպես, ինչպես նախատեսված է ոչ լիզինգային տեղաբաշխումների համար:

### A.1.6. Կանաչ նպատակները

Ի լրումն վերը նշված չափանիշների՝ վարկառուն ֆինանսավորման համաձայնագրով համաձայնել է ԵՆԲ-ի կողմից տրամադրված ֆինանսական միջոցների մի մասը տեղաբաշխել կանաչ լուծումներին նպաստող ներդրումներին և ծախսերին աջակցող Շահառուներին:

Այս լրացուցիչ համապատասխանության չափանիշին ենթանախագծի համապատասխանելու համար Շահառուն պետք է ապացուցի, որ այն համապատասխանում է հատուկ չափանիշներին և պայմաններին, և պետք է տրամադրի հաշվետվության համար սահմանված ցուցանիշներ (եթե կիրառելի է և/կամ եթե համաձայնեցված է ԵՆԲ պահանջների հետ), ինչպես նշված է Հավելված 3-ի համապատասխանության աղյուսակում:

### A.1.7. Գենդերային հավասարությունը և կանանց տնտեսական հզորացումը

Ի լրումն վերը նշված չափանիշների՝ վարկառուն ֆինանսավորման համաձայնագրով համաձայնել է ԵՆԲ-ի կողմից տրամադրված ֆինանսական միջոցների մի մասը տեղաբաշխել գենդերային հավասարությանը և կանանց տնտեսական հզորացմանն աջակցող Շահառուներին: Գենդերային հավասարությանը և կանանց տնտեսական հզորացմանն աջակցող Շահառու համարվելու համար Շահառուն պետք է ապացուցի, որ բավարարում է հետևյալ երեք չափանիշներից առնվազն մեկը՝

(a) Կանանց լիդերություն
Ինչպես ղեկավար մարմինների, այնպես էլ կառավարման խորհրդի/ներդրումային հանձնաժողովի (եթե այդպիսին կա) անդամների առնվազն 30%-ը կին է, և/կամ

[11] ԵՆԲ-ի ֆինանսավորման համար համապատասխան են միայն գործառնական վարձակալության տակ գտնվող կապիտալ ծախսերը: Գործառնական ծախսերը, ինչպես, օրինակ, ապահովագրության և շահագործման ծախսերը, համապատասխան չեն ԵՆԲ-ի ֆինանսավորման համար:



FB_Internal

(b) Կանանց ձեռներեցություն
Շահառուի բաժնետոմսերի ավելի քան 50%-ի սեփականատերերը կին են, կամ բիզնեսի հիմնադիրը կին է, և/կամ

(c) Աշխատուժում կանանց մասնակցությունը
Շահառուի աշխատակիցների մեջ կանանց մասնաբաժինը կազմում է առնվազն 30-50%, ինչպես սահմանված է տվյալ ոլորտի[12] համար, և որակի առնվազն մեկ ցուցանիշ գերազանցում է համապատասխանության ստանդարտը[13]:

(d) Սպառում
Շահառուն արտադրում է այնպիսի ապրանք/ապրանքներ կամ մատուցում է այնպիսի ծառայություններ, որոնք միտումնավոր կերպով կամ ոչ համամասնորեն օգուտ են բերում կանանց և անդրադառնում գենդերային հավասարության և կանանց տնտեսական հզորացման կարևոր խոչընդոտներին:

## A.2. ԵՆԹԱՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

### A.2.1. Ընդհանուր պայմանները

ԵՆԲ-ի ֆինանսավորման համար համապատասխան լինելու համար ենթանախագիծը՝

- Պետք է լինի տնտեսապես, տեխնիկապես, ֆինանսապես և բնապահպանական տեսանկյունից հիմնավոր,
- Ավելի խոշոր ներդրման մաս լինելու պարագայում պետք է լինի ինքնուրույն և ինքնին տեխնիկապես և տնտեսապես կենսունակ (կախված չլինի ներդրումների մնացած մասի իրականացումից)[14]:

Զգայուն ոլորտներում իրականացվող ենթածրագրերը (NACE ծածկագրերի ցանկում «1» խումբը), որոնք իրականացվում են հատուկ պահպանվող տարածքներում, համապատասխան չեն ԵՆԲ-ի ֆինանսավորման համար:

Ենթածրագրերը չպետք է առնչություն ունենան A.1.3.2 ենթաբաժնով սահմանված բացառված ոլորտների կամ A.1.3.3 ենթաբաժնով սահմանված բացառված գործունեությունների հետ (ներառյալ մոլախաղերի (A.1.3.3e) և ծխախոտի (A.1.3.3f) հետ

---

[12] Ենթակառուցվածքներ, էլեկտրաէներգիա, հեռահաղորդակցություն՝ 30%, ֆինանսական ծառայություններ, ծանր արդյունաբերություն, ագրոբիզնես և պարեն, մասնագիտական ծառայություններ՝ 40%, առողջապահություն, սպառողների սպասարկման ծառայություններ, կրթություն, թեթև արդյունաբերություն՝ 50%:

[13] Համապատասխանության ստանդարտները գերազանցող՝ կանանց հավաքագրումը, պահպանումը կամ կարիերայի առաջխաղացումը խրախուսող կոնկրետ քաղաքականություն կամ նախաձեռնություն՝ իրականացման ապացույցներով: Դա կարող է լինել՝ աշխատանքի ընդունելու ժամանակ գենդերային ոսպնյակի կիրառումը կողմնակալությունը վերացնելու և բազմազանություն ապահովելու նպատակով (հավաքագրում), աշխատավայրում բոլոր կանանց համար ներառական աշխատանքային միջավայր ապահովող քաղաքականությունները/նախաձեռնությունները (պահպանում), աշխատավայրում կանանց առաջընթացին և լիդերությանն աջակցող ակտիվ միջոցառումները (կարիերայի առաջխաղացում): Լրացուցիչ տեղեկատվության համար տես՝ 2X չափանիշների ուղեցույցը (2X criteria reference guide):

[14] Խոշոր ներդրումները (երբ ծրագրի ընդհանուր արժեքը գերազանցում է 25 միլիոն եվրոն) երբեմն բաղկացած են մի քանի ինքնուրույն մասերից: Եթե յուրաքանչյուր մաս ինքնին տնտեսապես և տեխնիկապես կենսունակ է և կախված չէ այլ մասերի իրականացումից, ԵՆԲ-ն կարող է այդ մասերից մեկը առանձին ֆինանսավորել, եթե դրա ներդրումային արժեքը 25 միլիոն եվրոյից ցածր է: Օրինակ՝ մասնավոր ընկերությունը պլանավորում է ընդլայնել գործող տոնավաճառը: Պլանավորվում է կառուցել երկու դահլիճ (որոնցից յուրաքանչյուրի արժեքը 15 մլն եվրո է), մեկը՝ բազմաֆունկցիոնալ, իսկ մյուսը՝ բացառապես գիտաժողովների համար: Թեև ներդրումների ընդհանուր գումարը գերազանցում է գործող ԵՆԲ վարկի շրջանակում ԵՆԲ-ի ֆինանսավորման համար համապատասխան առավելագույն գումարը, բայց երկու սրահների կառուցումը կարող է տեղի ունենալ միմյանցից տեխնիկապես և տնտեսապես անկախ կերպով: Հետևաբար ԵՆԲ-ն կարող է ֆինանսավորել նշված երկու ծրագրերից միայն մեկը՝ պայմանով, որ ըստ սույն ուղեցող նամակով սահմանված պահանջի՝ մյուս ծրագիրը չֆինանսավորվի ԵՆԲ-ի կողմից:



FB_Internal

կապված գործունեությունները): Բացի այդ, ենթածրագրերը չպետք է առնչություն ունենան հետևյալի հետ՝

a) Երրորդ անձին վաճառելու կամ վարձակալության տալու նպատակով անշարժ գույքի գնում (կառուցում կամ վերանորոգում), բացառությամբ սոցիալական բնակարանների, առևտրային կենտրոնների և/կամ գրասենյակային տարածքների կառուցման՝ դրանք այնպիսի երրորդ անձանց վարձակալության տալու նպատակով, որոնք բացառության կարգով կարող են դառնալ համապատասխան՝ յուրաքանչյուր դեպքում ԵՆԲ-ի կողմից նախնական հաստատման դեպքում:

b) Սպառողական վարկերի տրամադրում :

c) Զուտ ֆինանսական գործարքներ ցանկացած այնպիսի ծախսի վերաբերյալ, որը չի հանգեցնում ձեռնարկության լրացուցիչ կապիտալ ծախսերի կամ գործառնական գործունեության (ինչպես, օրինակ, պետական արժեթղթերի, այլ արժեթղթերի կամ որևէ այլ ֆինանսական պրոդուկտի առուվաճառքը, ձեռնարկության վարկերի վերաֆինանսավորումը), ներառյալ սեփականության իրավունքի փոփոխությունը (օրինակ՝ միաձուլումներ և ձեռքբերումներ):

d) Քաղաքական կամ կրոնական բովանդակությամբ նախաձեռնություններ:

e) Առողջապահության ոլորտի նախաձեռնություններ «խիստ ռեժիմի» հաստատություններով, ինչպիսիք են հոգեբուժական փակ հաստատություններ և/կամ ուղղիչ աշխատանքային գաղութները:

f) Առողջապահության ոլորտի այնպիսի նախաձեռնություններ, որոնք չեն համապատասխանում ԵՄ առողջապահական քաղաքականության ընդհանուր արժեքներին ու հիմնարար սկզբունքներին (գիտական ապացույցների և հավասար հասանելիության վրա հիմնված հասարակության համար կայուն լուծումներ):

g) Կրթական ոլորտում մանկապարտեզների, տարրական և միջնակարգ դպրոցների կողմից շահույթ հետապնդող ծրագրեր:

h) Աղազերծման գործողություններ:

### A.2.2. Համապատասխանեցումը Փարիզի համաձայնագրին[15]

Էներգիայի արտադրության, շենքերի կառուցման կամ վերականգնման, ինչպես նաև շարժական ակտիվների ձեռքբերման հետ կապված ենթածրագրերը համապատասխան են ԵՆԲ-ի ֆինանսավորման համար, եթե համապատասխանում են ստորև նշված պայմաններին:

### A.2.2.1. Էներգիայի արտադրությունը և դրան առնչվող գործունեությունները

Ենթածրագրերը չպետք է առնչվեն հետևյալ գործունեություններին՝

[15] ԵՆԲ-ի գործունեությունը համահունչ է Փարիզի համաձայնագրի սկզբունքներին և նպատակներին, որը կլիմայի փոփոխության վերաբերյալ իրավաբանորեն պարտադիր միջազգային պայմանագիր է: Այն ընդունվել է 196 կողմերի կողմից Փարիզում 2015թ. դեկտեմբերի 12-ին կայացած ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության 21-րդ միջազգային համաժողովի ժամանակ և ուժի մեջ է մտել 2016թ. նոյեմբերի 4-ին: Ելնելով համաձայնագրից՝ ենթադրվում է, որ ֆինանսավորման գործողությունները պետք է համապատասխանեն Փարիզի համաձայնագրի ջերմաստիճանի և հարմարվողականության նպատակներին և «համահունչ լինեն ցածր ածխածնային և կլիմայի նկատմամբ կայուն զարգացման սկզբունքներին»: Ըստ համաչափության սկզբունքի՝ միջանկյալ գործողությունների համապատասխանեցման շրջանակը պետք է շեշտը դնի ամենաինտենսիվ կերպով ածխաթթու գազ արտանետող երեք ոլորտների վրա՝
(i) Էներգետիկա
(ii) Տրանսպորտային միջոցներ, և
(iii) Բարձր էներգատարություն ունեցող արդյունաբերություններ, որոնք ներառված են Եվրոպական հանձնաժողովի կողմից ստեղծված Կայուն ֆինանսների տեխնիկական փորձագիտական խմբի կողմից մշակված ԵՄ Տաքսոնոմիայի մասին վերջնական հաշվետվությունում (այսինքն՝ երկաթ և պողպատ, ինչպես նաև դրանց հետ կապված արտադրական գործունեությունը, ալյումին, հիմնական քիմիական տարրեր, ցեմենտ և պլաստմասսա):
Բարձր էներգատարություն ունեցող ոլորտները NACE ծածկագրերի ցանկում նշված են որպես բացառված ոլորտներ:



FB_Internal

a) Ածխի արդյունահանում, վերամշակում, տեղափոխում և պահեստավորում,

b) Նավթի հանքավայրերի որոնում, նավթի արդյունահանում, վերամշակում, տեղափոխում, բաշխում և պահեստավորում,

c) Բնական գազի հանքավայրերի որոնում և արդյունահանում, հեղուկացում, վերագազավորում, տեղափոխում, բաշխում և պահեստավորում,

d) Հանածո վառելիքով աշխատող և համակցված էլեկտրակայանների, երկրաջերմային էլեկտրակայանների և մեծ ջրամբարներով հիդրոէլեկտրակայանների նկատմամբ կիրառելի արտանետումների սահմանված ստանդարտը (այսինքն՝ 250 գրամ CO2հ մեկ կՎտ/ժ էլեկտրաէներգիայի համար) գերազանցող էլեկտրաէներգիայի արտադրություն:

Շենքերի[16] ջեռուցումն ու հովացումը (ներառյալ ջերմության/հովացման և էլեկտրական էներգիայի համակցված արտադրությունը (ՋՀԷՀԱ, ՋԷՀԱ)) սահմանափակվում է հետևյալով՝

(i) Ջերմության արտադրություն՝ օգտագործելով վերականգնվող վառելիք կամ «համապատասխան համակցված արտադրություն»: Համապատասխան համակցված արտադրությունը սահմանվում է որպես՝

(1) 100%-ով վերականգնվող էներգիայի (ՎԷ), երկրորդային աղբյուրներից ստացված ջերմության կամ դրանց համակցության վրա հիմնված, ԿԱՄ

(2) Եթե 100%-ից պակաս մասով է հիմնված ՎԷ-ի վրա, իսկ մնացած մասը գազով է աշխատում (այլ հանածո վառելիք չի թույլատրվում)՝ ընդհանուր արդյունավետությունը պետք է լինի 85%-ից ավել, որտեղ արդյունավետությունը սահմանվում է որպես (Ջերմություն + Էլեկտրաէներգիայի արտադրություն) / Գազային վառելիքի սպառում > 85%

(ii) Մինչև 20 ՄՎտջ հզորությամբ բնական գազի փոքր և միջին կաթսաներ (եթե բավարարում են էներգաարդյունավետության նվազագույն չափանիշները), որոնք ԵՄ-ում սահմանվում են որպես A դասի կաթսաներ[17] (կիրառելի է <400 կՎտջ-ի նկատմամբ) կամ ավելի քան 90% արդյունավետությամբ կաթսաներ

(iii) Գործող կենտրոնական ջեռուցման ցանցերի վերականգնում կամ ընդլայնում, եթե տարեկան կտրվածքով ածխի, տորֆի, նավթի, գազի կամ ոչ օրգանական թափոնների այրման հետևանքով ածխաթթու գազի արտանետումների ավելացում չկա

(iv) Նոր կենտրոնական ջեռուցման ցանցեր կամ գործող կենտրոնական ջեռուցման ցանցերի զգալի ընդլայնում, եթե ցանցն օգտագործում է առնվազն 50% վերականգնվող էներգիա կամ 50% երկրորդային աղբյուրներից ստացված ջերմություն կամ 75% համակցված ջերմություն, կամ 50% նման էլեկտրաէներգիայի և ջերմության համադրություն:

Կենսազանգվածի օգտագործմամբ էլեկտրաէներգիա և/կամ ջերմություն արտադրող ենթանախագծերի համար պետք է բավարարվեն կենսազանգվածի կայունության հետևյալ պայմանները՝

(i) Հումքը պետք է լինի ԵՄ-ի ներսում արտադրված չաղտոտված կենսազանգվածից կամ կենսածին թափոններից կամ, ԵՄ-ից դուրս

[16] Թենքերը սահմանվում են որպես պատեր ունեցող փակ տանիքով շինություններ, որոնց ներսի կլիման կարգավորելու համար օգտագործվում է էներգիա: Շենքերի այս սահմանման մեջ են մտնում ջերմոցները և արդյունաբերական նշանակության շենքերը:

[17] https://ec.europa.eu/info/energy-climate-change-environment/standards-tools-and-labels/products-labelling-rules-and-requirements/energy-label-and-ecodesign/energy-efficient-products_en .



FB_Internal

արտադրված լինելու դեպքում, ունենա կայունության հավաստագիր, և չպետք է ստացված լինի սննդային և կերային մշակաբույսերից

(ii) Անտառային հումքը պետք է հավաստագրված լինի անտառների կայուն հավաստագրման միջազգային ստանդարտներին համապատասխան

(iii) Արգելվում է արմավենու յուղի պրոդուկտների կամ արևադարձային անտառներից և/կամ պահպանվող տարածքներից ստացված հումքի օգտագործումը: Պահպանվող տարածքներից են Նատուրա-2000-ի ցանկում գտնվող տարածքները, որոնք սահմանված են ԵՄ օրենսդրությամբ, Ռամսարի, Բեռնի (Էմերալդ ցանց) և Բոննի կոնվենցիաներով ճանաչված տարածքները, ինչպես նաև այն տարածքները, որոնք տվյալ երկրի կառավարության կողմից համարվում են պահպանվող տարածքներ կամ հատկորոշվել են պահպանվող տարածքի կարգավիճակ ստանալու համար:

Տարընթերցումներից խուսափելու համար պետք է հստակեցնել, որ շենքերի ջեռուցման/հովացման՝ վերը նշված պայմանները կիրառվում են նաև գյուղատնտեսական և արդյունաբերական նշանակության շենքերի նկատամբ, օրինակ՝ ծաղիկներ աճեցնելու համար նախատեսված տարածքների: Մասնավորապես՝ նոր օբյեկտները համապատասխան են ԵՆԲ ֆինանսավորման համար միայն այն դեպքում, երբ դրանց ջեռուցման/հովացման/էլեկտրաէներգիայի արտադրության համակարգը համապատասխանում է էներգաարդյունավետության վերը նշված չափանիշներին: Միևնույն ժամանակ **շրջանառու միջոցների, գիտահետազոտական աշխատանքի և գոյություն ունեցող շենքերի ջեռուցման/հովացման/էլեկտրաէներգիայի արտադրության համակարգերից բացի այլ սարքավորումների ֆինանսավորումը** համապատասխան է՝ անկախ առկա ջեռուցման/հովացման/էլեկտրաէներգիայի արտադրության համակարգի էներգաարդյունավետությունից՝ պայմանով, որ ենթանախագիծը բավարարի սույն Ֆինանսավորման ուղեցույցի մնացած բոլոր պայմանները: Էներգաարդյունավետության չափանիշները չեն կիրառվում արդյունաբերական գործընթացի ընթացքում ուղղակիորեն օգտագործվող ջերմային էներգիայի նկատմամբ:

### A.2.2.2. Շենքերի էներգաարդյունավետությունը

Նոր շենքերի կառուցումը և գոյություն ունեցող շենքերի կապիտալ վերանորոգումը (որը գերազանցում է մակերեսի 25%-ը կամ շենքի արժեքի 25%-ը՝ առանց հողի) պետք է համապատասխանի էներգախնայողության ազգային ստանդարտներին և միջազգային կամ միջպետական լավագույն շինարարական ստանդարտներին:

1000 քառակուսի մետրը գերազանցող ներքին մակերես ունեցող շենքերի համար պահանջվում է կանաչ շենքերի վկայական (օրինակ՝ EDGE, LEED, BREEAM կամ դրանց այլ համարժեք), որը հավաստիացնում է, որ շենքը երկրում կառուցվածներից լավագույնն է:

### A.2.2.3. Տրանսպորտային միջոցների՝ածխաթթու գազի արտանետումների սահմանաչափերը

Տրանսպորտային միջոցների[18] ֆինանսավորումը ենթակա է համապատասխանության հետևյալ պայմաններին՝

[18] Տարընթերցումներից խուսափելու համար պետք է հստակեցնել, որ այս սահմանափակումները չեն կիրառվում փոխադրումների համար չօգտագործվող մեքենաների նկատմամբ: Դրանք են, օրինակ, շինարարական աշխատանքների համար նախատեսված սարքավորումները, գյուղատնտեսության/անտառային տնտեսության ոլորտում օգտագործվող մեքենաները և այլն:



FB_Internal

| | |
|---|---|
| **Մարդատար ավտոմեքենաներ** | • Մեքենան պետք է օգտագործվի հիմնականում բիզնեսի և ոչ անձնական նպատակներով: |
| **Ֆուրգոններ / Թեթև կոմերցիոն ավտոմեքենաներ** | • Մեքենան պետք է օգտագործվի հիմնականում բիզնեսի և ոչ անձնական նպատակներով: |
| **Լ կատեգորիայի տրանսպորտային միջոցներ (2 և 3 անիվներով տրանսպորտային միջոցներ և քվադրիցիկլներ)** | • Զրոյական ուղղակի արտանետումներով տրանսպորտային միջոցներ: |
| **Բեռնատարներ / ծանրաքաշ տրանսպորտային միջոցներ** | • Ծանրաքաշ տրանսպորտային միջոցները/բեռնատարները համարվում են համապատասխան այն դեպքում, երբ դրանք հանդիսանում են տվյալ վայրում հասանելի լավագույն տեխնոլոգիական լուծումը:<br>• Հանածո վառելիքի կամ այլընտրանքային և հանածո վառելիքների խառնուրդի փոխադրման համար նախատեսված տրանսպորտային միջոցները համապատասխան չեն: |
| **Հասարակական տրանսպորտ՝ տրամվայներ, մետրո և ավտոբուսներ (քաղաքային և միջքաղաքային)** | • Զրոյական ուղղակի արտանետումներով տրանսպորտային միջոցներ (տրամվայներ, մետրոներ և ավտոբուսներ):<br>• Այլ տրանսպորտային միջոցները համապատասխան են, եթե ուղղակի արտանետումները մեկ ուղևոր-կմ-ի համար հավասար են 50 գ ածխաթթու գազի համարժեքի (գCO2հ/ուկմ) կամ դրանից պակաս են: |
| **Գնացքներ** | • Զրոյական ուղղակի արտանետումներով գնացքներ.<br>• Այլ ուղևորատար գնացքները համապատասխան են, եթե ուղղակի արտանետումները մեկ ուղևոր-կմ-ի համար հավասար են 50 գ ածխաթթու գազի համարժեքի (գCO2հ/ուկմ) կամ դրանից պակաս են:<br>• Այլ բեռնատար գնացքները համապատասխան են, եթե ուղղակի արտանետումները մեկ տոննա-կմ-ի համար հավասար են 28,3 գ ածխաթթու գազի համարժեքի (գCO2հ/տկմ) կամ դրանից պակաս են:<br>• Հանածո վառելիքի կամ այլընտրանքային և հանածո վառելիքների խառնուրդի փոխադրման համար նախատեսված տրանսպորտային միջոցները համապատասխան չեն: |
| **Ներքին ջրային ուղիներով նավարկող նավեր** | • Զրոյական ուղղակի արտանետումներով նավեր:<br>• Այլ մարդատար նավերը համապատասխան են, եթե ուղղակի արտանետումները մեկ ուղևոր-կմ-ի համար հավասար են 50 գ ածխաթթու գազի համարժեքի (գCO2հ/ուկմ) կամ դրանից պակաս են:<br>• Այլ բեռնատար նավերը համապատասխան են, եթե ուղղակի արտանետումները մեկ տոննա-կմ-ի համար հավասար են 28,3 գ ածխաթթու գազի համարժեքի (գCO2հ/տկմ) կամ դրանից պակաս են:<br>• Հանածո վառելիքի կամ այլընտրանքային վառելիքի հետ համակցված հանածո վառելիքի փոխադրման համար նախատեսված նավերը համապատասխան չեն: |



FB_Internal

| | |
|---|---|
| **Այլ տրանսպորտային միջոցներ** | • Նախորդ կատեգորիաներում չներառված տրանսպորտային միջոցները (ներառյալ նավերը), համապատասխան են:<br>• Հանածո վառելիքի կամ այլընտրանքային և հանածո վառելիքների խառնուրդի փոխադրման համար նախատեսված ծովային նավերը համապատասխան չեն: |

Վարկառուն պետք է մինչև ԵՆԲ վարկի լրիվ մարման ամսաթիվը պահպանի յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի ածխաթթու գազի արտանետումների ապացույցները (հիմնվելով տրանսպորտային միջոցի գրանցած ածխաթթու գազի արտանետումների վրա, եթե առկա է, կամ, այլ տրանսպորտային միջոցների դեպքում, յուրաքանչյուր ակտիվի դասի համար ԵՆԲ-ի ուղեցույցին համապատասխան (որը ներկայացված է ԵՆԲ-ի վեբկայքում[19]) վարկառուի նախնական գնահատման վրա):

### A.2.3. Ենթանախագծերի իրականացման վայրը

Ենթածրագրերը պետք է իրականացվեն Հայաստանի Հանրապետության տարածքում:

### A.2.4. Համապատասխանություն ներպետական օրենսդրությանը և ԵՆԲ-ի պահանջներին

Ըստ ֆինանսավորման համաձայնագրի պահանջների՝ վարկառուն պետք է Շահառուներից պահանջի, որ ԵՆԲ-ի միջոցներից ստացված եկամտով իրականացվող ենթածրագրերը համապատասխանեն ներպետական օրենսդրության համապատասխան դրույթներին և ԵՆԲ-ի պահանջներին, որոնք նկարագրված են ԵՆԲ-ի Բնապահպանական և սոցիալական ստանդարտներում[20] և Գնումների ուղեցույցում[21]:

#### A.2.4.1 Շրջակա միջավայր

Բացի այդ, վարկառուն պարտավորվում է ԵՆԲ-ին հաշվետվություն ներկայացնել այն Ենթանախագծերի հնարավոր բնապահպանական հայեցակետերի մասին, որոնց արժեքը գերազանցում է գլուխ A.1.3.2-ով զգայուն ոլորտների համար սահմանված շեմերը: Ցանկացած ոլորտի դեպքում եթե մի կոնկրետ Ենթանախագծի համար պահանջվում է Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում, եթե առկա են բնապահպանական որոշակի ռիսկեր կամ եթե Ենթանախագիծն իրականացվում է բնության հատուկ պահպանվող տարածքում, ԵՆԲ-ն 1 միլիոն եվրոն գերազանցող ընդհանուր արժեքով Ենթանախագծի դեպքում վարկառուից կպահանջի լրացուցիչ տեղեկատվություն:

Հավելվածներ 2(ա)-ում և 2(բ)-ում ներկայացված է Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործնական ուղեցույց:

#### A.2.4.2 Գնումներ

[19] https://greengateway.eib.org
[20] https://www.eib.org/en/publications/eib-group-environmental-and-social-policy
[21] ԵՆԲ-ի Գնումների ուղեցույցը կարելի է ներբեռնել հետևյալ հասցեից՝ http://www.eib.org/infocentre/publications/all/guide-to-procurement.htm



FB_Internal

Բոլոր Ենթանախագծերի համար, համապատասխան ընթացակարգերի պահպանմամբ՝ հաշվի առնելով առկա հանգամանքները և ներպետական օրենսդրությունը, վարկառուն պետք է համոզվի, որ Ենթանախագծերին առնչվող բոլոր ապրանքները, ծառայությունները և աշխատանքները ձեռք են բերվել արդար և թափանցիկ ընթացակարգերով՝ Ենթանախագծերի շահերից ելնելով տնտեսապես ամենաշահավետ առաջարկը գտնելու նպատակով՝ հաշվի առնելով որակը և ժամկետները և համապատասխանեցնելով ֆինանսավորման համաձայնագրի կնքման օրվա դրությամբ գործող ԵՆԲ Գնումների ուղեցույցով սահմանված ընթացակարգերին:

Վարկառուն պետք է երաշխավորի, որ Շահառուն համապատասխան Ենթանախագծի համար պարտավորվի ձեռք բերել սարքավորումներ, ստանալ ծառայություններ և պատվիրել աշխատանքներ բաց միջազգային մրցույթով՝ որքանով որ կիրառելի է համապատասխան Շահառուի համար:

## A.3. ԵՆԹԱՆԱԽԱԳԾԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

### A.3.1. Ընդունելի ծախսերի կատեգորիաներ

Որպես Շահառուների կողմից իրականացվող Ենթանախագծերի մաս՝ ծախսերի հետևյալ կատեգորիաները **համապատասխան** են ԳՀՀ-ի/ԵՆԲ-ի ֆինանսավորման տեղաբաշխման համար՝

a) Նյութական ակտիվների գնում, վերանորոգում կամ ընդլայնում, ներառյալ շինարարության փուլում նախագծումը և պլանավորումը, շինարարության փուլում ֆինանսավորման ծախսերը Ենթանախագծի ընդհանուր արժեքի մինչև 10%-ի չափով, Ենթանախագծի ընդհանուր արժեքի մինչև 10%-ի չափով հողի գնման ֆինանսավորումը, որը տեխնիկապես էական է ներդրումների համար[22], անշարժ գույքից բացի այլ ակտիվների (օրինակ՝ շինարարական սարքավորումների) գնումը՝ դրանք երրորդ անձանց վարձակալությամբ տալու նպատակով,

b) Ներդրումներ ոչ նյութական ակտիվներում, այսինքն՝

i. Գիտահետազոտական աշխատանքների և նորարարության հետ կապված ծախսեր (ներառյալ ընկերության գործունեության գիտահետազոտական և նորարարական բաղադրիչների հետ ուղղակիորեն կապված աշխատակիցների համախառն աշխատավարձերը և կոնցեսիաների, արտոնագրերի, լիցենզիաների, ապրանքային նշանների և նմանատիպ իրավունքների և ակտիվների ձեռքբերման և օգտագործման ծախսերը),

ii. Գործընթացների լիցենզիաների, ծրագրային ապահովման և արտադրողական կարողություն ունեցող այլ իրավունքների և ակտիվների գնում,

iii. Այլ ոչ նյութական ակտիվների գնում, ինչպիսիք են՝ ներդրում չպահանջող հանրային ռեսուրսների[23] օգտագործման լիցենզիաները, արտոնագրերը, ապրանքանիշերը, ապրանքային նշանները և նման այլ իրավունքներն ու ակտիվները[24]՝ Ենթանախագծի ծախսերի մինչև 10%-ի չափով,

---

[22] Ենթադրվում է, որ ենթածրագրի արժեքի հաշվարկում կարելի է ներառել հողի ամբողջ արժեքը, եթե այն տեխնիկապես էական է ներդրումների համար: Սակայն հատկացված գումարի մեջ ներառված հողի գնումը չպետք է գերազանցի ենթածրագրի արժեքի 10%-ը:

[23] Ներդրում չպահանջող հանրային ռեսուրսները վերաբերում են «մենաշնորհային իրավունքներին», երբ նման իրավունքներ ստեղծելու համար ներդրումներ չեն պահանջվում: Օրինակ՝ հեռարձակման հաճախականությունից օգտվելու իրավունքի համար հաճախականությունը տրամադրող մարմինը ներդրումներ չի պահանջում:

[24] Նման ոչ նյութական ակտիվների օրինակներ են տաքսիների լիցենզիաները, լրատվամիջոցների ծառայությունների վաճառքի իրավունքները և այլն:



FB_Internal

c) Շրջանառու միջոցներ,

Շահառուների գործառնական գործունեության համար անհրաժեշտ շրջանառու միջոցների ֆինանսավորումը, օրինակ՝ ընթացիկ ակտիվները, ինչպիսիք են պաշարները (նյութեր, անավարտ արտադրություն և վերջնական արտադրանք) և դեբիտորական պարտքերը, համապատասխանում են Ծրագրի շրջանակում ֆինանսավորման համար,

Շրջանառու միջոցների ենթաֆինանսավորման ԱԱՀ-ի (ներառյալ փոխհատուցվող ԱԱՀ-ի) ծախսային բաղադրիչը սկզբունքորեն համապատասխան չէ:

### A.3.2. Ոչ ընդունելի ծախսերի կատեգորիաներ[25]

Շահառուների կողմից կատարված ծախսերի հետևյալ կատեգորիաները **<u>համապատասխան չեն</u>**՝ անկախ A.1 ենթաբաժնի համաձայն Շահառուի համապատասխանությունից՝

a) Հողի գնման ֆինանսավորումը բացառվում է, եթե այն տեխնիկապես էական չէ ներդրումների համար (տես՝ ենթաբաժին A.3.1.a). գյուղատնտեսական նշանակության հողերի գնումը միշտ բացառվում է,

b) Օգտակար հանածոների արդյունահանման համար գուդվիլի, լիցենզիաների կամ իրավունքների ձեռքբերում և գյուղատնտեսության ոլորտում արտադրության իրավունքների ձեռքբերումը,

c) Հարկերը, ինչպիսիք են ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ),

d) Տուրքերը (այսինքն՝ ներմուծման կամ արտահանման համար վճարվող հարկը կամ տուրքը):

## A.4. <u>ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԵՆԹԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ</u>

### A.4.1. Շահառուներին տրվող ենթաֆինանսավորման չափը

ԵՆԲ-ի ֆինանսավորումը կարող է տեղաբաշխվել ենթաֆինանսավորմանը **Շահառուների այն ենթանախագծերի համար, որոնց գումարը չի գերազանցում 25 միլիոն եվրոն** (կամ դրան համարժեք գումարը այլ արժույթով): <u>Տարընթերցումներից խուսափելու համար պետք է հստակեցնել, որ նոր ներդրումներից կամ ծախսերից բաղկացած ենթանախագծերի դեպքում (ըստ սահմանումների բաժնում բերված՝ ենթանախագծի (ա) կետի) ԵՆԲ ֆինանսավորումը չի կարող տեղաբաշխվել այն ենթաֆինանսավորումներին, որոնք վերաֆինանսավորում են նախկին ֆինանսավորումը նույն ենթանախագծի համար (բացառությամբ այն դեպքերի, երբ այդ նոր ենթաֆինանսավորումը նախատեսված է ավելի մեծ գումարի համար, ընդ որում այդ դեպքում հնարավոր է տեղաբաշխում միայն գումարի ավելացված մասի չափով):</u>

**ԵՆԲ տեղաբաշխման գումարը կարող է լինել համապատասխան ենթաֆինանսավորման մինչև 100%-ը, բայց չի կարող գերազանցել 12.5 մլն եվրոն** (կամ դրան համարժեք գումարը այլ արժույթով) կամ **համապատասխան ենթանախագծի արժեքը**: Եթե ենթանախագիծը ֆինանսավորվում է ԵՄ ֆինանսական աջակցությամբ, ԵՆԲ-ի տեղաբաշխման և ԵՄ ֆինանսական աջակցության գումարը ցանկացած պահի դրությամբ չպետք է գերազանցի ենթանախագծի արժեքի 100%-ը:

[25] Այս կատեգորիաները կարող են արտացոլվել ենթածրագրի արժեքում, սակայն դրանք չեն կարող արտացոլվել տեղաբաշխված գումարի մեջ:



FB_Internal

### A.4.2. Շահառուներին տրվող ենթաֆինանսավորման ժամկետները

Վարկառուի կողմից Շահառուներին տրվող **ենթավարկերի ժամկետը** պետք է լինի առնվազն 2 տարի և չպետք է գերազանցի ֆինանսավորվող Ենթանախագծի տնտեսական և տեխնիկական տևողությունը (հիմնական միջոցներում կատարվող ներդրումների համար): ԵՆԲ-ի ֆինանսավորումը կարող է տրամադրվել նաև շրջանառու միջոցների համար:

Վարկառուն պետք է Շահառուների հետ ստորագրվող Ենթավարկի տրամադրման հայտըենթավարկի տրամադրման հայտ ներկայացնի Վարկատուին (ԳՀՀ ԾԿԳ-ին) առավելագույնը 6 ամիս վաղեմության ժամկետ ունեցող Ընդունելի ծախսերի ֆինանսավորման նպատակով, սակայն ոչ շուտ քան Ծրագրի Գլխավոր վարկային պայմանագրի ստորագրումըենթավարկի տրամադրման հայտ:



FB_Internal

## B. ԵՆԲ ՎԱՐԿԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

### B.1. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՇԱՀԱՌՈՒԻՆ ԵՆԲ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ՏՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

#### B.1.1. Շահառուին տեղեկատվության տրամադրման եղանակը և այդ տեղեկատվության բովանդակությունը

ԵՆԲ-ի ֆինանսավորման տեղաբաշխումը պետք է հանգեցնի Շահառուի համար փոխառության պայմանների բարելավմանը («**Ֆինանսական առավելություն**»):

Ֆինանսական առավելության նվազագույն մակարդակը սահմանված է ֆինանսավորման համաձայնագրով:

Վարկառուն պարտավորվում է **յուրաքանչյուր Շահառուին անհատապես տեղեկացնել** ԵՆԲ-ի աջակցության և ԵՆԲ-ի աջակցությունից բխող ֆինանսական առավելությունների մասին: Վարկառուն պետք է նշի ԵՆԲ-ի անունը **ենթաֆինանսավորման փաստաթղթում**:

ԵՆԲ-ին իրավունք է վերապահվում վարկառուի կողմից Շահառուներին անհատապես տեղեկատվություն տրամադրելու ապացույցներ պահանջել: Վարկառուն պետք է տեղեկատվության տրամադրման ապացույցները պահպանի առնվազն մինչև ԵՆԲ վարկի լրիվ մարման օրը:

Ցանկության դեպքում Շահառուներին վերը սահմանված կերպով անհատապես տեղեկատվություն տրամադրելուց բացի վարկառուն կարող է ԵՆԲ-ի միջոցներից օգտվող որոշակի ֆինանսական արտադրանք գովազդելու համար օգտագործել **արտադրանքի պիտակները**: Այս արտադրանքի վիճակը պետք է հստակորեն տարբերվի վարկառուի «ստանդարտ»՝ ԵՆԲ-ից աջակցություն չստացող արտադրանքից: ԵՆԲ-ի և վարկառուի միջև համագործակցությունը գովազդելու համար արտադրանքի անվանումը կամ շուկայավարման փաստաթղթերը պետք է հստակ հղում կատարեն ԵՆԲ-ին:

#### B.1.2. Վարկառուի/Միջնորդի և ԵՆԲ-ի կայքերում պարունակվող տեղեկատվությունը

Վարկառուն պետք է իր **կայքում** (օրինակ՝ միջնաժամկետ և երկարաժամկետ ֆինանսավորման տեսակներին նվիրված բաժնում) տեղեկատվությունը տեղադրի ՓՄՁ-ներին/Միջ-Կապերին ԵՆԲ-ի կողմից տրվող աջակցության մասին և պետք է ապահովի, որ յուրաքանչյուր միջնորդ տեղադրի այդ տեղեկատվությունը իր կայքում: Տրամադրված տեղեկատվության մեջ պետք է նշել Շահառուների համապատասխանության չափանիշները և ԵՆԲ-ի աջակցության արդյունքում ստացվող ֆինանսական առավելությունները: ԵՆԲ-ի գործունեությանը վերաբերող տեղեկատվության բովանդակությունը պետք է համաձայնեցվի ԵՆԲ-ի և վարկառուի միջև:

Շահառուներին ԵՆԲ-ի ֆինանսավորում առաջարկող գործընկեր ֆինանսական կազմակերպություններին արագ բացահայտել թույլ տալու համար ԵՆԲ-ի կայքում ներկայացված է գործընկեր ֆինանսական կազմակերպությունների ցանկը յուրաքանչյուր երկրի համար: Այդ ցանկը թարմացնելու համար Վարկատուն Վարկառուից պարբերաբար կպահանջի վերահաստատել Վարկառուի հասցեն և ընդհանուր կոնտակտային տվյալները: Վարկառուն պետք է նաև ԳՀՀ/ԵՆԲ-ին տրամադրի իր կայքում ԵՆԲ-ի գործունեության մասին նշող բաժինների հղումները և ԳՀՀ/ԵՆԲ-ին տեղյակ պահի նման



FB_Internal

հղումների կամ առհասարակ կոնտակտային տվյալների ցանկացած փոփոխության մասին:

## B.2. ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագրային միջոցների տեղաբաշխման վերջում վարկառուն պետք է հաստատի ԳՀՀ/ԵՆԲ-ին, որ բացառված ոլորտներից դուրս և ոչ բացառված գործունեության ֆինանսավորման համար օգտագործված Շահառուներին տրված միջնաժամկետ և երկարաժամկետ (առնվազն 2 տարի ժամկետով) ֆինանսավորման չափը, **որը վարկառուի կողմից տրամադրվել է տեղաբաշխման ժամանակահատվածում և ֆինանսավորվել է ԵՆԲ-ի ֆինանսավորումից զատ այլ միջոցներով (**Լրացուցիչ պորտֆել**)**, առնվազն հավասար է եղել Ծրագրի շրջանակում Շահառուներին տրված ԵՆԲ-ի միջոցների գումարին[26]: Լրացուցիչ պորտֆելը պետք է համապատասխանի A.2.2 բաժնում նշված Փարիզի համաձայնագրին համապատասխանեցման պայմաններին:

Լրացուցիչ պորտֆելի առնվազն 40%-ը կազմում է կանաչ ենթանախագծերի վարկավորումը, իսկ առնվազն 30%-ը՝ այն Շահառուների վարկավորումը, որոնք համապատասխանում են կանանց տնտեսական հզորացման չափանիշներից առնվազն մեկին՝ ԵՆԲ վարկի տեղաբաշխման պահանջներին համապատասխան, ինչպես նշված է Գլխավոր վարկային պայմանագրում:

[26] Օրինակ` եթե Ծրագրի շրջանակում ստացված միջոցների ընդհանուր գումարը կազմում է 100 միլիոն եվրոյին համարժեք ՀՀ դրամ, ապա տեղաբաշխման ժամանակահատվածի վերջում Վարկառուն պետք է հաստատի ԵՆԲ-ին, որ բացառված ոլորտներից դուրս միջնաժամկետ և երկարաժամկետ ՓՄՁ/միջին կապիտալի ֆինանսավորման ծավալը (ավելի քան 2 տարի ժամկետով), որը ստորագրվել է տեղաբաշխման ժամանակահատվածում և ֆինանսավորվել ոչ ԵՆԲ-ի միջոցներով, կազմել է առնվազն ևս 100 միլիոն եվրոյին համարժեք ՀՀ դրամ:



FB_Internal

## C. ԵՆԹԱՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

### C.1. ԵՆԹԱՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԳՀՀ/ԵՆԲ

Այն Շահառուների համար, որոնք գործունեություն են ծավալում i) ընդունելի ոլորտներում («0» խումբ, ինչպես սահմանված է 1.3.2 ենթաբաժնով) և ii) զգայունզգայուն ոլորտներում («1» խումբ, ինչպես սահմանված է 1.3.2 ենթաբաժնով), այն դեպքերում, երբ Ենթանախագծի արժեքը չի գերազանցում է **1.2 միլիոն եվրոն**, վարկառուն պետք է ենթավարկի տրամադրման հայտեր ներկայացնի կանոնավոր կերպով՝ Ծրագրի պայմաններին համապատասխան՝ տեղաբաշխման ժամանակահատվածում ԵՆԲ վարկի օգտագործումը հիմնավորելու համար: Հայտերը պետք է ուղարկվեն հետևյալ էլ. փոստի հասցեին՝ gaf@gaf.am:

Ենթավարկի տրամադրման հայտերում գումարը և ֆինանսական տվյալները պետք է ներկայացված լինեն եվրոյով: Ենթավարկի գումարը ԳՀՀ-ի կողմից հաստատվում է ՀՀ դրամով՝ հիմք ընդունելով Ենթավարկի գրավոր հաստատման համար ԳՀՀ-ն օգտագործում է ենթավարկի տրամադրման հայտի ներկայացման օրվանից մեկ աշխատանքային օր առաջ գործող փոխարժեքը:

ԶգայունԶգայուն ոլորտներում ենթավարկի տրամադրման հայտերի համար, եթե Ենթանախագծի արժեքը գերազանցում է 1.2 միլիոն եվրոն, վարկառուն պետք է նաև ԳՀՀ-ին/ԵՆԲ-ին նախնական հաստատման համար ուղարկի ենթավարկի տրամադրման հայտի մանրամասն տեխնիկական առաջադրանք:

Ենթավարկի տրամադրման հայտերում առկա տեղեկատվությունը ԳՀՀ-ին փոխանցելու համար վարկառուն պետք է օգտագործի ԳՀՀ-ի կողմից էլեկտրոնային փոստով տրամադրված էլեկտրոնային հայտը («ենթավարկի տրամադրման հայտ»):

Ենթավարկի տրամադրման հայտում ներառվող տեղեկատվությունը պետք է պարունակի առնվազն հետևյալը՝

a) Շահառուի անունը

b) Շահառուի հարկ վճարողի հաշվեհամարը (Client ID):

c) Շահառուի հասցեն և քաղաքը

d) Շահառուի գործունեության ծածկագիրը (NACE 6 նիշանոց ծածկագիրը)

e) Շահառուի հիմնական աշխատողների թիվը (տես՝ A.1.1 ենթաբաժինը)

f) ԱՄ Դոլար/Եվրոյի փոխարժեքը

g) Ենթանախագծի ընդհանուր արժեքը եվրոյով

h) Վարկառուի կողմից Շահառուին տրված վարկի գումարը եվրոյով

i) Տեղաբաշխման գումարը եվրոյով

j) Վարկառուի կողմից Շահառուին տրամադրված վարկի ստորագրման ամսաթիվը և ժամկետը ամիսներով

k) Ենթանախագծի նկարագրությունը

l) Ֆինանսական առավելությունը՝ բազիսային միավորներով ներկայացված

m) Հաստատում այն մասին, որ ԵՆԲ-ի աջակցության և ԵՆԲ-ի աջակցության արդյունքում ստացված ֆինանսական առավելության մասին տեղեկատվությունը փոխանցվել է Շահառուին



FB_Internal

n) Ենթանախագծի ծախսերի ամենամեծ բաղադրիչի համար ծախսի տեսակը՝

1 = ներդրումներ *նյութական և/կամ ոչ նյութական ակտիվներում* (A.3.1. (a) և/կամ (b))
2 = շրջանառու միջոցներ (A.3.1 (c))

Կանաչ ներդրումներ (Հավելված 3) ունեցող Ենթանախագծերի համար վարկառուն պետք է ենթավարկի տրամադրման հայտում ներառի առնվազն հետևյալը՝

I. Կանաչ Ենթանախագծի կատեգորիան՝ ենթավարկի տրամադրման հայտի բացվող մենյուում պետք է ընտրել համապատասխան դաշտը

II. Կանաչ ներդրումների համար նախատեսված (ամբողջովին կամ մասնակի) գումարը՝ պետք է մուտքագրվի եվրոյով

III. Կանաչ արդյունքների ցուցիչներ՝ պետք է մուտքագրել Հավելված 3-ի համապատասխանության աղյուսակի «Արդյունքների ցուցիչ» սյունակում ներկայացված ցուցիչներն արտացոլող արժեքները

IV. Կանաչ Ենթանախագծի մասին լրացուցիչ տեղեկություններ՝ պետք է մուտքագրել Ենթանախագծի նկարագրությունը և/կամ դրա մասին հավելյալ տեղեկատվությունը, ինչպես սահմանված է Հավելված 3-ի համապատասխանության աղյուսակով:

Յանկացած հատուկ չափորոշիչ կամ պայման, ինչպես նաև արձանագրված ցուցանիշները պետք է ստուգելի լինեն ուղեկցող փաստաթղթերով: Վարկառուն պետք է այդ ուղեկցող փաստաթղթերը պահի վարկային գործում: Ուղեկցող փաստաթղթերը կարող են ենթարկվել ընտրանքային աուդիտի կամ ԳՀՀ-ի/ԵՆԲ-ի խնդրանքով ներկայացվել նրանց:

**Գենդերային հավասարության և կանանց տնտեսական հզորացման չափանիշներից** մեկին համապատասխանող Շահառուների համար վարկառուն պետք է ենթավարկի տրամադրման հայտում ներառի հետևյալ տեղեկատվությունը՝

I. Կանանց տնտեսական հզորացման կատեգորիան, ինչպես սահմանված է A.1.7 ենթաբաժնով (բացվող մենյու)

II. Կատեգորիային վերաբերող փաստացի տոկոսը/տոկոսները

III. Շահառուի աշխատակիցների թվում կանանց տոկոսը (հիմնական աշխատողների թվում):

ԳՀՀ-ը/ԵՆԲ-ն իրավունք է վերապահում ստուգելու տրամադրված տվյալների ճշգրտությունը և կարող է պարզաբանման նպատակով վարկառուից լրացուցիչ տեղեկություններ խնդրել:

**Ենթահավելված 2 Բնապահպանական գնահատման ուղեցույց**

**Ենթահավելված 2(ա) Ծրագրեր, որտեղ պահանջվում է ՇՄԱԳ**

(ԵՄ ՇՄԱԳ-ի մասին թիվ 2011/92/ԵՄ հրահանգի (2014/52/ԵՄ-ով փոփոխված) 1-ին հավելվածի ամփոփագիր)



FB_Internal

1. Հում նավթի **վերամշակման գործարաններ** և օրական 500 տոննա կամ ավել ածխի կամ բիտումային թերթաքարի գազաֆիկացման և հեղուկացման գործարաններ:

2. (ա) 300 մեգավատտ կամ ավելի ջերմային հզորությամբ **ջերմային էլեկտրակայաններ և այրման այլ կայանքներ,** (բ) **ատոմային էլեկտրակայաններ** և այլ միջուկային ռեակտորներ:

3. **Միջուկային վառելիքի** կամ **ռադիոակտիվ թափոնների** համար նախատեսված կառույցներ:

4. (ա) **թուջի և պողպատի** նախնական ձուլման համակցված գործարաններ, (բ) **գունավոր չմշակված մետաղների արտադրության գործարաններ:**

5. **Ասբեստի** արդյունահանման և ասբեստի և ասբեստ պարունակող արտադրանքի վերամշակման և փոխակերպման գործարաններ:

6. **Ինտեգրված քիմիական գործարաններ**, այսինքն՝ քիմիական փոխակերպման գործընթացների միջոցով արդյունաբերական մասշտաբներով նյութերի արտադրության համար նախատեսված գործարաններ:

7. **Երկաթուղային մագիստրալների**, **օդանավակայանների**, **ավտոմայրուղիների** և **արագընթաց ճանապարհների** կառուցում:

8. Ներքին ջրային փոխադրումների համար **ներքին ջրային ուղիներ և նավահանգիստներ** և **առևտրային/արտաքին նավահանգիստներ,** որոնք նախատեսված են 1350 տոննայից ավելի խոշոր նավերի համար:

9. **Վտանգավոր թափոնների հեռացման** գործարաններ (օրինակ՝ այրման, քիմիական վերամշակման կամ աղբավայրի համար):

10. **Ոչ վտանգավոր թափոնների** այրման կամ քիմիական վերամշակման համար օրական 100 տոննայից ավել հզորությամբ թափոնների հեռացման գործարաններ:

11. **Ստորերկրյա ջրային ռեսուրսներից ջրառի** կամ **ստորերկրյա ջրերի պաշարների արհեստական վերականգնման** սխեմաներ, երբ վերցված կամ վերականգնված ջրի տարեկան ծավալը 10 միլիոն խորանարդ մետր կամ ավել է:

12. **Գետավազանների միջև ջրային ռեսուրսների տեղափոխման** աշխատանքներ**,** երբ (i) այդ տեղափոխումը նպատակ ունի կանխել ջրի հնարավոր պակասը և երբ տեղափոխվող ջրի քանակը գերազանցում է տարեկան 100 միլիոն խորանարդ մետրը, կամ (ii) երբ ջրառի ավազանի բազմամյա միջին հոսքը գերազանցում է տարեկան 2000 միլիոն խորանարդ մետրը, և երբ տեղափոխվող ջրի քանակը գերազանցում է այդ հոսքի 5%-ը:

13. **Կեղտաջրերի մաքրման** կայաններ, որոնց հզորությունը գերազանցում է 150 000 բնակչի համարժեքը:

14. Առևտրային նպատակներով **նավթի և բնական գազի արդյունահանում**, երբ արդյունահանվող քանակությունը գերազանցում է օրական 500 տոննան նավթի դեպքում և օրական 500 000 խորանարդ մետրը գազի դեպքում:



FB_Internal

15. **Ամբարտակներ** և այլ կառուցվածքներ, որոնք նախատեսված են ջրի հավաքման կամ մշտական պահեստավորման համար, երբ հավաքված կամ պահեստավորված ջրի նոր կամ լրացուցիչ քանակությունը գերազանցում է 10 միլիոն խորանարդ մետրը:

16. Ավելի քան 800 մմ տրամագծով և ավելի քան 40 կմ երկարությամբ **գազի, նավթի, քիմիական նյութերի կամ ածխածնի երկօքսիդի հոսքերի տեղափոխման խողովակաշարեր:**

17. **Ինտենսիվ թռչնաբուծարաններ կամ խոզաբուծարաններ**՝ բրոյլերների համար ավելի քան 85 000 տեղով, հավերի համար ավելի քան 60 000 տեղով, մսատու խոզերի համար (30 կգ-ից ավելի կշռով) ավելի քան 3 000 տեղով կամ էգ խոզերի համար ավելի քան 900 տեղով:

18. Փայտանյութից կամ նման մանրաթելային նյութերից **ցելյուլոզ արտադրող** գործարաններ կամ **թուղթ և ստվարաթուղթ արտադրող** գործարաններ՝ օրական ավելի քան 200 տոննա հզորությամբ:

19. **Քարհանքեր և բաց հանքեր**, որտեղ մակերեսը գերազանցում է 25 հեկտարը, կամ տորֆի արդյունահանում, որտեղ մակերեսը գերազանցում է 150 հեկտարը:

20. 220 կվտ և ավելի լարման և 15 կմ-ից ավելի երկարությամբ **էլեկտրահաղորդման օդային գծերի** անցկացում:

21. 200 000 տոննա կամ ավելի տարողունակությամբ **նավթային, նավթաքիմիական և քիմիական արտադրանքների պահեստներ:**

22. **Ածխածնի երկօքսիդի** ստորգետնյա պահեստավորման կայանքներ:

23. Ստորգետնյա կուտակման նպատակով **ածխածնի երկօքսիդի հոսքերի կլանման** կայաններ, որտեղ CO2-ի տարեկան կլանումը 1,5 մեգատոննա կամ ավելի է:



FB_Internal

**Ենթահավելված 2(բ) Ծրագրեր, որտեղ ՇՄԱԳ-իվերաբերյալ պահանջվում է իրավասու մարմնի որոշումը**

1. **Գյուղատնտեսություն**, **անտառտնտեսություն և ձկնաբուծություն,** նախագծեր հետևյալ ոլորտներում՝ (i) Գյուղական տարածքներում հողատարածքների վերականգնում, (ii) անմշակ հողերը կամ կիսաբնական տարածքների օգտագործում ինտենսիվ գյուղատնտեսական նպատակներով, (iii) ջրի կառավարում, ներառյալ ոռոգումը և հողի չորացումը, (iv) անտառատնկում և անտառահատում, եթե կա անցում հողօգտագործման այլ տեսակի, (v) ինտենսիվ անասնապահություն կամ ձկնաբուծություն, (vi) ծովից ազատված հողերի մելիորացիա:

2. **Արդյունահանող արդյունաբերություն**, ներառյալ հանքարդյունաբերությունը, օգտակար հանածոների արդյունահանումը գետերի և լճերի նստվածքներից, խորը հորատումը:

3. **Էներգետիկ արդյունաբերություն**, ներառյալ էլեկտրաէներգիայի, գոլորշու և տաք ջրի արտադրությունը, բնական գազի և հանածո վառելիքի պահեստավորման արդյունաբերական կառույցները, հիդրոէլեկտրակայանները և հողմակայանները:

4. **Մետաղների արտադրություն և վերամշակում,** ներառյալ մետաղների վերամշակումը, ավտոտրանսպորտային միջոցների, շարժիչների, նավերի և երկաթուղային սարքավորումների հավաքումը:

5. **Հանքարդյունաբերություն**, ներառյալ կոքսի վառարանները և ցեմենտի, ապակու և կերամիկայի արտադրությունը:

6. **Քիմիական արդյունաբերություն**, ներառյալ քիմիական նյութերի, պեստիցիդների, դեղանյութերի արտադրությունը և նավթային, նավթաքիմիական և քիմիական արտադրանքների պահեստները:

7. **Սննդարդյունաբերություն՝** (i) բուսական և կենդանական յուղերի և ճարպերի արտադրություն, (ii) կենդանական և բուսական արտադրանքի փաթեթավորում և պահածոյացում, (iii) կաթնամթերքի արտադրություն, (iv) գարեջրագործություն և ածիկի պատրաստում, (v) հրուշակեղենի և օշարակի արտադրություն, (vi) սպանդանոցներ, (vii) արդյունաբերական օսլայի արտադրության կայանքներ, (viii) ձկնալյուրի և ձկան յուղի գործարաններ, (ix) շաքարի գործարաններ:

8. **Տեքստիլի, կաշվի, փայտի և թղթի արդյունաբերություն:**

9. **Կաուչուկի արդյունաբերություն:**

10. **Ենթակառուցվածքային նախագծեր**, այդ թվում՝ արդյունաբերական օբյեկտների կառուցումը, քաղաքաշինական նախագծերը, տրանսպորտային ենթակառուցվածները, ջրային ուղիները, ամբարտակները և ստորերկրյա ջրերից ջրառը և դրանց պաշարների վերականգնումը, նավթատար և գազատար խողովակների տեղադրումը, ջրանցույցների, ափապաշտպան կառույցների տեղադրում:



FB_Internal

11. **Այլ նախագծեր՝** (i) մրցուղիներ, (ii) թափոնների հեռացման գործարաններ (որոնք ընդգրկված չեն ԵՄ ՇՄԱԳ հրահանգի 1-ին հավելվածում), (iii) կեղտաջրերի մաքրման կայաններ (որոնք ընդգրկված չեն ԵՄ ՇՄԱԳ հրահանգի 1-ին հավելվածում), (iv) մետաղի ջարդոնի պահեստավորում, ներառյալ անպետք ավտոտրանսպորտային միջոցները, (v) շարժիչների, տուրբինների կամ ռեակտորների փորձարկման ստենդեր, (vi) արհեստական հանքային մանրաթելեր արտադրող գործարաններ, (vii) պայթուցիկ նյութերի հայտնաբերման կամ ոչնչացման կայանքներ, viii) սպանդանոցները:

12. **Զբոսաշրջություն և ժամանց՝** դահուկուղիներ և ճոպանուղիներ, նավահանգիստներ, քաղաքային բնակավայրերից դուրս գտնվող գյուղական հանգստյան գոտիներ, ճամբարներ և թեմատիկ այգիներ:

Իրավասու մարմինը կարող է որոշել, որ Ենթահավելված 2(բ)-ում ներառված ծրագրերի համար ՇՄԱԳ չի պահանջվում: Վարկառուն պետք է իր մոտ ունենա կամ ՇՄԱԳ-ի ամփոփագրի պատճենը, կամ էլ իրավասու մարմնի նամակի պատճենը, որտեղ բացատրվում է, թե ինչու ՇՄԱԳ չի պահանջվում: Եթե ՇՄԱԳ պահանջվում է ըստ ՇՄԱԳ-ի մասին ԵՄ-ի հրահանգի, բայց ոչ միջպետական օրենսդրությամբ, ԵՆԲ-ն կարող է ԳՀՀ-ի խնդրանքով ինքը գնահատի Ենթանախագիծը:



FB_Internal

**<u>Ենթահավելված 3. Կանաչ ներդրումների աղյուսակ</u>**

ԵՆԲ-ի միջոցները կարող են համարվել կանաչ ներդրումներ ֆինանսավորող, եթե դրանք աջակցում են հետևյալին՝

(i) Աղյուսակում նշված «Կանաչ ենթանախագծի կատեգորիաներից» որևէ մի կատեգորիայի պատկանող **ենթանախագծի**, որը համապատասխանում է ստորև սահմանված «Կանաչ» ներդրումների ենթանախագծերին էապես նպաստելու համար սահմանված հատուկ չափանիշներով և պայմաններով» սահմանված համապատասխանության չափանիշներին:
<u>Հաշվետվությունների ներկայացումը</u>՝ վարկառուն պետք է կանաչ արդյունքների ցուցիչի/ցուցիչների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնի ստորև բերված աղյուսակում ենթավարկի տրամադրման հայտի «Արդյունքների ցուցիչ» սյունակում նշված չափման միավորներով, ինչպես նաև տրամադրի սույն Ֆինանսավորման ուղեցույցի C.1 բաժնում նշված մանրամասները,

կամ

(ii) Աղյուսակի կանաչ ենթանախագծի կատեգորիաներից որևէ մեկին չպատկանող ենթանախագծի, որն իրականացվելու է այնպիսի **Շահառուի** կողմից**,** ում նախորդ ֆինանսական տարվա տարեկան հասույթի (կամ հաջորդ ֆինանսական ժամանակահատվածների հասույթների) ավելի քան 90%-ը ստեղծվել է (կստեղծվի) աղյուսակի էապես նպաստելու համար սահմանված հատուկ չափանիշներին համապատասխանող գործունեության արդյունքում:
Ինչ վերաբերում է Շահառուի կանաչ գործունեության բնույթին, վարկառուն պետք է կարողանա ԳՀՀ-ին/ԵՆԲ-ին բավարարող ապացույցներ ներկայացնել կիրառելի հատուկ չափանիշների և պայմանների կատարման մասին, օրինակ՝ ֆինանսական շահառուի կողմից ինքնահայտարարագիր համապատասխան գործունեությանն աջակցող արժանահավատ բիզնես պլանի տեսքով՝ շրջանառության կանխատեսումներով և հնարավորության դեպքում սահմանված կապիտալ և գործառնական ծախսերի ծրագրերով: Այսպիսի հիմնավորման հիման վրա ամբողջ տեղաբաշխումը կարող է համարվել կլիմայական և/կամ բնապահպանական նպատակներին հասնելուն նպաստող:
<u>Հաշվետվությունների ներկայացումը</u>՝ վարկառուն/միջնորդը պետք է Շահառուի կանաչ գործունեության բնույթի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրի ենթավարկի տրամադրման հայտի «Լրացուցիչ տեղեկություններ կանաչ գործունեության վերաբերյալ» սյունակում, ինչպես նաև տրամադրի սույն Ֆինանսավորման ուղեցույցի C.1 ենթաբաժնով սահմանված մանրամասները:

Ցանկացած հատուկ չափորոշիչ կամ պայման և հաշվետվության մեջ նշված ցուցանիշ կիրառելիության դեպքում պետք է ստուգելի լինեն ուղեկցող փաստաթղթերով: Միջնորդը պետք է այդ ուղեկցող փաստաթղթերը պահի վարկային գործում: Ուղեկցող փաստաթղթերը կարող են ենթարկվել ընտրանքային ստուգումների կամ ԳՀՀ-ի/ԵՆԲ-ի խնդրանքով ներկայացվել նրանց:

| **Կանաչ ոլորտներ և գործունեություններ** | **Կանաչ ենթանախագծի կատեգորիա** | **Կանաչ նպատակներին ենթանախագծերի <u>էապես նպաստելու</u> համար սահմանված հատուկ չափանիշներ և պայմաններ** | **Կանաչ արդյունքների ցուցիչ (չափման միավորներ)** | **Լրացուցիչ տեղեկություններ կանաչ գործունեության վերաբերյալ** |
|---|---|---|---|---|
| **Կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացմանն ուղղված ներդրումներ** | | | | |



FB_Internal

| | | | | |
|---|---|---|---|---|
| Վերականգնվող էներգիայի արտադրություն | Արևային էներգիա | Հատուկ չափանիշներ չեն կիրառվում: | Դրվածքային հզորություն (ՄՎտ) | Ներդրումների նկարագրությունը, ներառյալ էլեկտրաէներգիայի արտադրության կանխատեսումը (ՄՎտժ/տարի) |
| Վերականգնվող էներգիայի արտադրություն | Կենսազանգվածից էլեկտրաէներգիայի և/կամ ջերմության արտադրություն | Բոլոր այն ներդրումները, որոնք վերաբերում են կենսաէներգիայից էլեկտրաէներգիա և/կամ ջերմություն/հովացում արտադրող սարքավորումներին, որոնք համապատասխանում են <u>ԵՄ Տաքսոնոմիայի պատվիրակված ակտի հավելված I-ի</u> 4.8, 4.20 և 4.24 բաժինների էապես նպաստելու չափանիշներին և բավարարում են հումքի կայունության պայմանները, ինչպես սահմանված է Փարիզի համաձայնագրին համապատասխանեցման վերաբերյալ սույն Ֆինանսավորման ուղեցույցի բաժին A.2.2-ով: | Դրվածքային հզորություն (ՄՎտջ)<br>կամ<br>Դրվածքային հզորություն (ՄՎտէ)<br>Որը որ կիրառելի է | Ներդրումների նկարագրությունը |
| Վերականգնվող էներգիայի արտադրություն | Կենսագազից էլեկտրաէներգիայի և/կամ ջերմության արտադրություն | | | |
| Վերականգնվող էներգիայի արտադրություն | Քամու էներգիա | Հատուկ չափանիշներ չեն կիրառվում: | Դրվածքային հզորություն (ՄՎտ) | Ներդրումների նկարագրությունը, եթե առկա է, ներառյալ էլեկտրաէներգիայի արտադրության կանխատեսումը (ՄՎտժ/տարի) |
| Վերականգնվող էներգիային ուղղված այլ նախագծեր | Վերականգնվող էներգիային առնչվող սարքավորումների արտադրություն | Ներդրումներ վերականգնվող էներգիայի համապատասխան տեխնոլոգիաներին վերաբերող արտադրական գործունեության մեջ: | չկա | Ներդրումների նկարագրությունը |
| Վերականգնվող էներգիային ուղղված այլ նախագծեր | Վերականգնվող էներգիայի կայանների հետ ինտեգրված մարտկոցներ կամ էներգիայի կուտակման այլ սարքավորումներ | **Ջերմային էներգիայի կուտակման համար՝**<br>Բոլոր նեդրումները ջերմակուտակման աշխատանքներում համապատասխանում են չափանիշներին:<br><br>Կենտրոնական ջեռուցման/հովացման ցանցների հետ կապված լինելու դեպքում ջերմային պահեստարանները նույնպես ենթարկվում են նույն չափանիշներին, ինչ որ կենտրոնական ջեռուցման/հովացման ցանցերը:<br><br>**Էլեկտրաէներգիայի կուտակման համար՝**<br>Բոլոր ներդրումները էլեկտրաէներգիայի կուտակման աշխատանքներում, ներառյալ՝ հիդրոկուտակման համակարգերում, համապատասխանում են չափանիշներին:<br><br>Եթե գործունեությունը ներառում է քիմիական էներգիայի կուտակում, ապա կուտակման միջավայրը (ինչպիսիք են ջրածինը կամ ամոնիակը) համապատասխանում է ԵՄ Տաքսոնոմիայի ՊԱ-ի հավելված I-ի 3.10-րդից մինչև 3.16 բաժիններով նախատեսված համապատասխան արտադրանքի արտադրության չափանիշներին, բացառությամբ մարտկոցներ օգտագործող էլեկտրաէներգիայի պահեստարանների, որոնք մշտապես համապատասխան են: | Կուտակային հզորություն (ԳՎտժ) | Ներդրումների նկարագրությունը |
| Էներգաարդյունավետության | Նոր շենքերի կառուցում | Նոր շենքերի շինարարությանն առնչվող բոլոր համապատասխան ծախսային կատեգորիաները, եթե տվյալ շենքը՝<br><br>i. որդեգրում է բազայինի համեմատ լավագույն էներգետիկ ստանդարտները, որոնք սահմանվելու են ԵՆԲ-ի կողմից յուրաքանչյուր առանձին դեպքի համար: Օրինակ՝ թափանցիկ, գործնական մեթոդով սահմանված էներգիայի սպառման բազային | Առաջնային էներգախնայողություն (ՄՎտժ/տարի) | |



FB_Internal

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | մակարդակով միջազգայնորեն ճանաչված հավաստագրման համակարգերը (ՄՖԿ-ի Edge հավաստագրումը, LEED-ը (Առաջնորդությունը էներգետիկայի և շրջակա միջավայրի նախագծման ոլորտում), BREAM-ը և այլն), և<br>ii. հասնում է էներգիայի սպառման այնպիսի մակարդակի, որը 20%-ով ցածր է հավաստագրման համակարգով սահմանված բազային մակարդակից: | | |
| Էներգաարդյունավետության | Առկա շենքերի էներգաարդյունավետության բարելավում | **Առկա շենքերի վերանորոգում**<br>Շենքերի վերանորոգմանն առնչվող բոլոր համապատասխան ծախսային կատեգորիաները, եթե՝<br>i. Տվյալ շենքը որդեգրում է լավագույն էներգետիկ ստանդարտները երկրի բազայինի համեմատ: Օրինակ՝ թափանցիկ, գործնական մեթոդով սահմանված էներգիայի սպառման բազային մակարդակով միջազգայնորեն ճանաչված հավաստագրման համակարգերը (ՄՖԿ-ի Edge հավաստագրումը, LEED-ը, BREAM-ը և այլն),<br>ii. Ակնկալվող էներգետիկ խնայողությունները հաշվարկվում են Բանկի կողմից ընդունելի մեթոդով, օրինակ՝ հավաստագրման սխեմաներով,<br>iii. Հարաբերական բարելավում. վերանորոգման շնորհիվ շենքը նախքան վերանորոգումը բազային ցուցանիշների համեմատ հասնում է առնվազն 30% էներգախնայողության: Ընդհանուր առմամբ վերականգնվող էներգիայի աղբյուրների միջոցով զուտ առաջնային էներգիայի պահանջարկի նվազումները հաշվի չեն առնվում, եթե տարբերակումն իրոք անհնարին է կամ եթե օգտագործվող հավաստագրման սխեմաները նման տարբերակում չեն իրականացնում: Այդ դեպքում կարող են հաշվի առնվել վերականգնվող էներգիայի աղբյուրների միջոցով առաջնային էներգիայի պահանջարկի նվազումները:<br><br>**Անհատական վերանորոգման միջոցառումներ**<br><br>(որն ընդգրկում է էներգաարդյունավետ սարքավորումների տեղադրումը, շահագործումը և վերնորոգումը, շենքերում (և շենքերին կից ավտոկայանատեղիներում) էլեկտրամեքենաների համար լիցքավորման կայանների տեղադրումը, շահագործումը և վերանորոգումը, շենքերի էներգաարդյունավետության ցուցանիշների չափման, կարգավորման և վերահսկման գործիքների և սարքերի տեղադրումը, շահագործումը և վերանորոգումը, և վերականգնվող էներգիայի սարքավորումների տեղադրումը, շահագործումը և վերանորոգումը)<br><br>Ստորև բերված ցանկում ներառված էներգաարդյունավետության բարելավումներին առնչվող բոլոր համապատասխան ծախսային կատեգորիաները, եթե՝<br><br>դրանք համապատասխանում են թիվ 2010/31/ԵՄ հրահանգն իրականացնող կիրառելի ազգային միջոցառումներով առանձին բաղադրիչների և համակարգերի համար սահմանված նվազագույն պահանջներին և, եթե կիրառելի է, (ԵՄ) թիվ 2017/1369 կանոնակարգի և դրա համաձայն ընդունված պատվիրակված ակտերի համաձայն դասվում են էներգաարդյունավետության երկու ամենաբարձր լրակազմված դասերում: Շահառուները պարտավոր են ապահովել, որպեսզի իրենց վերանորոգման միջոցառումները համապատասխանեն այդ ներպետական կամ տարածաշրջանային կարգավորումներին: | Էներգիայի գնահատված խնայողություն (ՄՎտժ/տարի)<br><br>Էներգիայի գնահատված խնայողություն (կՎտժ/տարի)<br><br>Էներգիայի ակնկալվող խնայողությունները պետք է նշվեն էներգիայի աուդիտում, նախկին և ներկա ԷԱՎ-ների (էներգաարդյունավետության վկայագիր՝ ըստ ՎՁԵԲ-ի) համեմատության մեջ կամ Բանկի համար ընդունելի որևէ այլ թափանցիկ և համաչափ մեթոդով: | Ներդրումների նկարագրությունը |



FB_Internal

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | <u>**ՇԵՆՔԻ ԱՐՏԱՔԻՆ ԹԱՂԱՆԹԻ ՀԱՄԱՐ**</u><br><br>Ծախսը կարող է ներառել բոլոր նյութերը, շահագործումից հանումը, տեղադրման ծախսը, նախագծման/տեխնիկական աջակցության բոլոր ծախսերը (ճարտարագիտություն, էներգիայի սիմուլյացիաներ, էներգիայի աուդիտները, ԷԱՎ-ի կազմումը և այլն) և աշխատանքներն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ բոլոր օժանդակ ծախսերը (հին նյութերի հեռացում, փայտամածների պատրաստում, մեխանիկական ամրակապումներ, հարակցանյութ, հարդարում, նախագծի կառավարում, շահագործման հանձնում և այլն):<br><br>a) **Շենքի արտաքին թաղանթի ջերմամեկուսացում.** Շենքի արտաքին թաղանթում մեկուսացման բարելավման և էներգետիկ կորուստների նվազեցման բոլոր միջոցառումները (օրինակ՝ հերմետիկության ապահովման միջոցառումներ, ջերմային կամուրջների ազդեցությունների նվազեցման միջոցառումներ և այլն):<br><br>b) **Առկա պատուհանների և արտաքին դռների փոխարինում նոր էներգաարդյունավետ պատուհաններով և դռներով:**<br><br>c) **Էներգաարդյունավետության այլ միջոցառումներ շենքի կմախքում կամ ճարտարապետությունում, որը ջերմարտադրողականության բարելավման վրա ազդեցություն կունենա և/կամ էներգիայի սպառումը նվազեցնելու հնարավորություն կտա:** Սա կարող է ներառել, օրինակ, արտաքին ստվերարկման հարմարանքները, արևային էներգիայի կարգավորման համակարգեր ունեցող ֆասադային կամ կտուրային բաղադրիչներ, «կանաչ կտուրներ», պասիվ համակարգեր և այլն, կամ այլ միջոցառումներ, որոնք նվազեցնում են շենքի էներգիայի պահանջարկը և որևէ այլ տեղ ներառված չեն:<br><br><u>**ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱՐ**</u><br><br>Ծախսերը կարող են ներառել բոլոր նյութական ծախսերը, շահագործումից հանումը, տեղադրման ծախսերը, նախագծման/տեխնիկական աջակցության ծախսերը (ճարտարագիտությունը, էներգիայի սիմուլյացիաները, էներգիայի աուդիտները, ԷԱՎ-ի կազմումը և այլն) և աշխատանքներն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ բոլոր օժանդակ ծախսերը:<br><br>d) **Անարդյունավետ կաթսայի կամ վառարանի փոխարինումը բարձր էներգաարդյունավետությամբ գազի կոնդենսացիոն կաթսաներով կամ վերականգնվող էներգիայի աղբյուրներից սնվող կաթսաներով**: Գազի կաթսաների դեպքում դրանք պետք է լինեն առնվազն A դասի կաթսաներ կամ պետք է ունենան 90% կամ ավելի սեզոնային արդյունավետություն:<br><br>e) **Ջեռուցման պոմպերի տեղադրում և արդիականացում:**<br><br>f) **Վերը ներկայացված a)-c) կետերից բացի՝ բոլոր այլ բաղադրիչները, որոնք նվազեցնում են ՋՕՕ համակարգերի (Ջեռուցում, Օդափոխություն և Օդորակում) և տների տաք ջրամատակարարման համակարգերի էներգիայի սպառումը, ներառյալ կենտրոնական <u>ջեռուցմանն առնչվող սարքավորումները</u>** (օրինակ՝ հովացման արտադրական համակարգեր, | | |



FB_Internal

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | պահեստավորման բաքեր, օդափոխության բլոկներ, ջերմափոխանակիչներ, ջերմավերականգնող բլոկներ/համակարգեր, խուղակներ, խողովակներ, փականներ, ռադիատորներ, առաստաղի/հատակի հովացման հեծաններ, օդափոխիչ սարքեր, հաճախականության փոխարկիչ, պոմպեր և այլն, և իրական կատարողականին և սպառմանը հետևող բոլոր հարակից վերահսկիչ համակարգերը և էլեկտրաէներգիայի հաշվիչ համակարգերը):<br><br>g) **Լուսավորություն.** Լուսավորության լուսադիոդային աղբյուրներ և դրանց հետ կապված սարքավորումներ (մալուխավորում, տրանսֆորմատորներ, վերահսկիչ համակարգեր և այլն): Արդյունավետությունը բարձրացնող հավելվածներ (օրինակ՝ շարժումների և ցերեկային լույսի կարգավորումներ)<br><br>h) **Շենքերի կառավարման համակարգեր (ՇԿՀ) և էներգետիկ կառավարման համակարգեր (ԷԿՀ).** Բոլոր սարքակազմերը, հաշվիչները կամ ենթահաշվիչները, հաղորդակցության համակարգերը և ծրագրակազմերը/ծրագրավորումը, որոնք անհրաժեշտ են շենքի տեխնիկական համակարգերի վերահսկման և շենքերի էներգիայի սպառման մոնիթորինգի և բարելավման համար:<br><br>i) **Գոտիավորված թերմոստատներ և խելացի թերմոստատների համակարգեր:** Սարքակազմեր, հաղորդակցության համակարգեր և ծրագրավորման/ծրագրակազմի հավելվածներ:<br><br>j) **Վերականգնվող էներգիայի աղբյուրներից ստացվող էներգիայի վրա հիմնված էներգիայի մատակարարման ապակենտրոնացված համակարգեր, եթե դրանք տեղադրված են տեղում որպես շենքի ծառայություններ** (պետք է տրամադրել ծախսի, հզորության և ընդհանուր արտադրության հիմնավորում). արևային ֆոտովոլտային համակարգեր և բոլոր օժանդակ տեխնիկական սարքավորումները, ներառյալ՝ ցանցին միացումը, արևային վահանակներ (տաք ջրի վահանակներ, արտաքին տիպի արևային կոլեկտորներ, վակուումային արևային կոլեկտորներ և այլն) և բոլոր օժանդակ տեխնիկական սարքավորումները, հողմատուրբիններ և օժանդակ տեխնիկական սարքավորումներ, ՎԷ կաթսաներ և ՎԷ ՋԷՀԱ համակարգեր (օրինակ՝ կենսազանգված, կենսագազ և այլն):<br><br>k) **Ջերմային կամ էլեկտրական էներգիա կուտակող պահեստարանների** (և բոլոր օժանդակ տեխնիկական սարքավորումների) **տեղադրում:**<br><br>l) **Բարձր արդյունավետության ջերմային և էլեկտրական էներգիայի համակցված արտադրության միկրո կայան/ՋԷՀԱ, որը սնուցվում է նաև բնական գազով (համակցված ջերմային և էլեկտրական էներգիայի** հզորությունը < 50 կՎտ էլ.**):**<br><br>m) Էլեկտրամեքենաների լիցքավորման կայանների տեղադրում: | | |



FB_Internal

| | | | | |
|---|---|---|---|---|
| Էներգաարդյունավետության | Առկա արդյունաբերական օբյեկտների/ՓՄՁ-ների էներգաարդյունավետության բարելավում | **Այս կատեգորիան տարածվում է Տաքսոնոմիայով չնախատեսված գործունեության այն բոլոր ոլորտների վրա, որոնց նկատմամբ կիրառվում են ԵՄ Պատվիրակված ակտի համապատասխան բաժիններով նախատեսված էապես նպաստելու չափանիշները[27]:**<br><br>**Ներդրումներն համապատասխան են էներգաարդյունավետության դրույթին, եթե դրանց հիմնական նպատակը էներգախնայողությունն է, և եթե բավարարվում են հետևյալ պայմանները՝**<br><br>(i) Հզորության մեծացումից բխող արտանետումների ցանկացած ավելացում պետք է լիարժեքորեն փոխհատուցվի գործող կարողության նկատմամբ էներգիաարդյունավետության միջոցառումներից բխող արտանետումների խնայողություններով:<br><br>(ii) եթե ներդրումն առնչվում է էլեկտրաէներգիայի և/կամ ջերմության/հովացման արտադրության մասով արդյունաբերական էներգետիկ օբյեկտներին, ապա դրանք պետք է կամ լինեն առաջնային արդյունաբերական գործընթացի անբաժան մասը, կամ էլ ունենան ոչ ավելի քան 20 Մվտ էլեկտրական և/կամ ջերմային/հովացման արտադրության դրվածքային հզորություն:<br><br>(iii) էներգաարդյունավետության մեջ կատարվող ներդրումները պետք է սահմանվեն/իրականացվեն, իսկ էներգախնայողությունները կամ ՋԳ արտանետումների նվազեցումները պետք է հաշվարկվեն ստորև ներկայացված կետերից որևէ մեկի հիման վրա՝<br><br>• Էներգիայի աուդիտ (համաձայն «EN 16247 էներգիա» եվրոպական ստանդարտի կամ դրա համարժեքի), ներառյալ ներքին աուդիտները կամ խորհրդատվական ծառայությունների միջոցով կատարված աուդիտները, կամ<br>• Բանկի կողմից ընդունելի կամ էներգիայի կառավարման համակարգերի համաձայն հավաստագրված (օրինակ՝ ISO 50001) ներքին կամ արտաքին հավատարմագրում ունեցող տեխնիկական փորձագետի կողմից հավաստագրված էներգաարդյունավետության ներքին պլանների արդյունք, կամ<br>• Սպիտակ հավաստագրի սխեմա, կամ<br>• Արտադրողների, մատակարարների կամ տեղադրողների կողմից հավաստագրված էներգիայի (կամ ՋԳ արտանետման) խնայողություններ, կամ<br>• ԵՆԲ-ի կողմից սահմանված կամ ցանկացած այլ թափանցիկ կամ համաչափ մեթոդով նախատեսված և Բանկի համար ընդունելի միջոցառումների ցանկ, որը ցույց է տալիս էներգաարդյունավետության բարձրացման բարելավում կամ էներգիայի սպառման նվազում: | Գնահատված առաջնային էներգախնայողություն (կՎտժ/տարի), որը գնահատվում է ցանկացած ընդունելի մեթոդի հիման վրա | Ներդրումների նկարագրությունը |
| Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնաբուծություն և հողօգտագործում | Գյուղատնտեսության ոլորտի էներգաարդյունավետության բարելավում (ներառյալ ռեսուրսների | **Ներդրումները համապատասխան են, եթե դրանք գործող գյուղատնտեսական կամ անտառտնտեսական աշխատանքներում զգալիորեն նվազեցնում են էներգիայի սպառումը կամ ՋԳ-երի արտանետումները և բավարարում են հետևյալ պայմանները՝**<br><br>(i) Ներդրումը համապատասխան է, եթե դրա հիմնական նպատակը էներգախնայողություններն են և/կամ ՋԳ արտանետումների խնայողությունները, և այն էապես չի ավելացնում հզորությունը: Հզորության մեծացումից բխող արտանետումների ցանկացած ավելացում պետք է լիարժեքորեն | Գնահատված առաջնային էներգախնայողություն (կՎտժ/տարի) կամ ՋԳ արտանետումների գնահատված | Ներդրումների նկարագրությունը |

[27] Տես՝ ԵՄ Տաքսոնոմիայի Պատվիրակված ակտի Հավելված I-ի հետևյալ բաժինները՝ 3.7 Ցեմենտի արտադրություն, 3.8 Ալյումինի արտադրություն, 3.9 Երկաթի և պողպատի արտադրություն, 3.10 Ջրածնի արտադրություն, 3.11 Տեխնիկական ածխածնի արտադրություն, 3.12 Նատրիումի կարբոնատի արտադրություն, 3.13 Քլորի արտադրություն, 3.14 ԵՄ հիմնական օրգանական քիմիական նյութերի արտադրություն, 3.15 Հեղուկ անջուր ամոնիակի արտադրություն, 3.16 Ազոտական թթվի արտադրություն կամ 3.17 Պլաստմասսայի առաջնային ձևերի արտադրություն:



FB_Internal

| | | | | |
|---|---|---|---|---|
| | արդյունավետությունը) | փոխհատուցվի գործող կարողության նկատմամբ էներգիաարդյունավետության միջոցառումներից բխող արտանետումների խնայողություններով:<br>(ii) Էներգիայի միջին սպառումը և/կամ ՋԳ արտանետումները պետք է կրճատվեն առնվազն 10%-ով, և սարքավորման/մեքենասարքավորման ցանկացած փոխարինում համապատասխան է միայն այն դեպքում, եթե գնվում է լավագույն դասի նոր սարքավորում/մեքենասարքավորում:<br>(iii) Էներգիայի խնայողությունները/ՋԳ արտանետումները պետք է սահմանվեն հետևյալ կետերից որևէ մեկի հիման վրա.<br>• էներգաարդյունավետության ազգային գյուղատնտեսական ծրագրեր, կամ<br>• արտադրողների, մատակարարների կամ տեղադրողների կողմից հավաստագրված էներգիայի (կամ ՋԳ արտանետումների) խնայողություններ, կամ<br>• ԵՆԲ-ի կողմից Կանաչ համապատասխանության ստուգման գործիքով նախատեսված դրական միջոցառումների ցանկ կամ Բանկի համար ընդունելի ցանկացած այլ թափանցիկ կամ համաչափ մեթոդ, որը ցույց է տալիս էներգախնայողության ցուցանիշների բարելավում կամ էներգիայի սպառման նվազում: | խնայողություն կամ Վառելիքի գնահատված խնայողություն (լ/ժ), որը որ հարմար է, կամ ցանկացած այլ ընդունելի գնահատված ազդեցություն, ներառյալ ԵՆԲ կանաչ համապատասխանության գործիքը | |
| Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնաբուծություն և հողօգտագործում | Ինքնագնաց կամ քարշող գյուղատնտեսական (ֆերմային/անտառային) մեքենաների և սարքավորումների փոխարինում (ծանր և թեթև) | **Նույնը, ինչ վերևում (Գյուղատնտեսության ոլորտի էներգաարդյունավետության բարելավում (ներառյալ ռեսուրսների արդյունավետությունը))** | Գնահատված առաջնային էներգախնայողություն (կՎտժ/տարի) | Ներդրումների նկարագրությունը |
| Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնաբուծություն և հողօգտագործում | Գյուղատնտեսության ռեսուրսաարդյունավետության բարձրացում | **Նույնը, ինչ վերևում (Գյուղատնտեսության ոլորտի էներգաարդյունավետության բարելավում (ներառյալ ռեսուրսների արդյունավետությունը))** | Խնայված ռեսուրսներ (տոննա/տարի) կամ որևէ այլ ընդունելի գնահատված ազդեցություն | Ներդրումների նկարագրությունը, ներառյալ բարելավված տարածքի մակերեսը (հա), եթե անհրաժեշտ է |
| Գյուղատնտեսություն՝ գոյություն ունեցող ածխածնի ավազանների բարելավում կամ պահպանում | Գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքի փոփոխություն վարելահողերից բազմամյա տնկարկների | Գյուղատնտեսական ծրագրեր, որոնք նպաստում են հողում կամ կենսազանգվածում ածխածնի պաշարների ավելացմանը, կամ էռոզիայի կամ չորացման արդյունքում ածխածնի կորստից հետո հողի վերականգնման միջոցով:<br>Այստեղ ներառված են նաև ներդրումներն օժանդակ գործողություններում (օրինակ՝ մեքենասարքավորումների գնում, ներդրումներ պլանտացիաներում և ենթակառուցվածքներում), որոնք անհրաժեշտ են ստորև ներկայացված էապես նպաստելու չափանիշներին հասնելու համար: | Տնկված/պահպանված տարածք (հա) կամ որևէ այլ ընդունելի գնահատված ազդեցություն | Ներդրումների նկարագրությունը |



FB_Internal

| | | | | |
|---|---|---|---|---|
| Գյուղատնտեսություն՝ գոյություն ունեցող ածխածնի ավազանների բարելավում կամ պահպանում | Հողօգտագործման մշտական փոփոխություն վարելահողից խոտհարքների | Ենթածրագրերը պետք է համապատասխանեն ստորև ներկայացվածներից որևէ մեկին կամ դրանցից մի քանիսին՝<br><br>• Առնվազն հինգ տարվա ծրագրի տևողություն<br>• Մինիմալ հերկում, ներառյալ վարելահողերի փոխակերպումը բազմամյա տնկարկների, եթե օգտագործողը/գյուղացին պարտավորվում է առաջիկա 5 տարիներին իր գյուղացիական տնտեսությունում կատարել մինիմալ հերկում կամ ընդհանրապես չկատարել<br>• Էռոզիայից խուսափում<br><br>Այն ներդրումները, որտեղ ներառված է արծրևաջրերից սնվող գյուղատնտեսական հողերի վերափոխումը ոռոգելի հողերի, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության և անտառային հողերի գնումը, համապատասխան չեն: | Տնկված/ պահպանված տարածք (հա) կամ որևէ այլ ընդունելի գնահատված ազդեցություն | Ներդրումների նկարագրությունը |
| Գյուղատնտեսություն՝ գոյություն ունեցող ածխածնի ավազանների բարելավում կամ պահպանում | Գոյություն ունեցող այգիների նորացում՝ հինը նորով փոխարինելու միջոցով | | Տնկված/ պահպանված տարածք (հա) կամ որևէ այլ ընդունելի գնահատված ազդեցություն | Ներդրումների նկարագրությունը |
| Անասնաբուծություն | Ներդրումներ գոմաղբի վերամշակման, կիրառման և պահպանման բարելավված համակարգերում | Համապատասխան են այն ենթածրագրերը, որոնք հանգեցնում են կենդանիներից ստացվող ՋԳ արտանետումների զգալի կրճատումներին՝ համապատասխանելով հետևյալ պահանջներին՝<br>• Փոխարինումը պետք է լինի նոր, բարելավված տեխնոլոգիաներով (բացառվում է նմանը նմանով փոխարինելը),<br>• Կենդանիների գլխաքանակի մեծացում չպետք է լինի,<br>• Ոչ մի նոր (գրինֆիլդ) ներդրում անասնաբուծական արտադրությունում:<br><br>**Համապատասխան միջոցառումների օրինակներ՝**<br>• Ներդրումներ հեղուկ գոմաղբի և խյուսի տանիքածածկային կամ հերմետիկ պահեստավորման մեջ,<br>• Ներդրումներ մակերեսային տերևածածկի տակ խյուսի կամ (պինդ) գոմաղբի ցրիչի տեղադրման մեջ՝ օգտագործելով, օրինակ, փողրակներ կամ հեղուկ պարարտանյութերի ցրիչներ,<br>• Ներդրումներ կենսաքայքայիչ միջոցներով գոմաղբի հավաքման, պահպանության և օգտագործման մեջ,<br>• Խյուսի և գոմաղբի վերամշակում գյուղացիական տնտեսության տարածքում գտնվող կայանում, որը կարող է ներառել գյուղացիական տնտեսության տարածքում ստացվող խյուսի կամ գյուղացիական տնտեսության տարածքում անաէրոբ քայքայումից ստացված ֆերմենտացված օրգանական նստվածքի առանձնացումը պինդ և հեղուկ չափամասերի՝ նախքան պահեստավորումը և գյուղատնտեսական հողերում կիրառումը, ինչպես նաև գոմաղբի օգտագործումը: | Ավելի լավ կառավարվող տարածք (հա)<br><br>կամ որևէ այլ ընդունելի գնահատված ազդեցություն | |
| Ցածր արտանետումներ ունեցող տրանսպորտային միջոցներ | Մարդատար ավտոմեքենաներ | • Զրոյական ուղղակի արտանետումներով տրանսպորտային միջոցները (ներառյալ ջրածնային շարժիչով, վառելիքային էլեմենտով, էլեկտրական) ինքնաբերաբար համապատասխան են:<br>• Առավելագույնը 50 գ $CO_2$/կմ (WLTP/Թեթև ավտոմեքենաների փորձարկման համաշխարհային համաձայնեցված ընթացակարգ) ուղղակի արտանետումներով տրանսպորտային միջոցները :<br><br>**L կատեգորիայի տրանսպորտային միջոցների համար (մոպեդներ, մոտոցիկլեր, շարժիչով եռանիվ մոտոցիկլեր և քվադրիցիկլներ)՝**<br><br>• միայն զրոյական ուղղակի արտանետումներով տրանսպորտային միջոցները (ներառյալ ջրածնային շարժիչով, վառելիքային էլեմենտով, էլեկտրական) | չկա | Ներդրումների նկարագրությունը |
| Ցածր արտանետումներ ունեցող տրանսպորտային միջոցներ | Թեթև կոմերցիոն ավտոմեքենաներ/ֆուրգոններ | | չկա | Ներդրումների նկարագրությունը |



FB_Internal

<table>
<tr>
<td rowspan="1">Ցածր արտանետումներ ունեցող տրանսպորտային միջոցներ</td>
<td>Ծանրաքաշ առևտրային և արդյունաբերական տրանսպորտային միջոցներ</td>
<td>

• Այն զրոյական ուղղակի արտանետումներով ծանրաքարշ տրանսպորտային միջոցների ձեռքբերումը, որոնք արտանետում են 1 գ $CO_2$/կՎտժ (կամ 1գ $CO_2$/կմ որոշ N2 մեքենաների համար), ինքնաբերաբար համապատասխան է:

Ցածր արտանետումներով այն ծանրաքարշ տրանսպորտային միջոցները, որոնք ունեն նույն ենթախմբի բոլոր տրանսպորտային միջոցների ելակետային $CO_2$ արտանետումների 50%-ից ցածր ուղղակի $CO_2$ արտանետումներ, համապատասխան են ըստ ստորև ներկայացված աղյուսակի՝

<table>
<tr><th>Խմբի նկարագրություն</th><th>Տրանսպորտային միջոցների խումբ</th><th>Մեքենաների ենթախումբ*</th><th>$CO_2$ ելակետային արժեքի 50% [գ/տկմ]</th></tr>
<tr><td rowspan="3">Թափքավոր, 4x2 լիսեռ GVW (քաշը) > 16 տ</td><td rowspan="3">4</td><td>4-UD</td><td>153.61</td></tr>
<tr><td>4-RD</td><td>98.58</td></tr>
<tr><td>4-LH</td><td>52.98</td></tr>
<tr><td rowspan="2">Տրակտոր 4x2 լիսեռ, GVW > 16 տ</td><td rowspan="2">5</td><td>5-RD</td><td>42.00</td></tr>
<tr><td>5-LH</td><td>28.30</td></tr>
<tr><td rowspan="2">Թափքավոր, 6x2 լիսեռ</td><td rowspan="2">9</td><td>9-RD</td><td>55.49</td></tr>
<tr><td>9-LH</td><td>32.58</td></tr>
<tr><td rowspan="2">Տրակտոր, 6x2 լիսեռ</td><td rowspan="2">10</td><td>10-RD</td><td>41.63</td></tr>
<tr><td>10-LH</td><td>29.13</td></tr>
</table>

Մնացած խմբերի համար (քանի դեռ այլ սահմանում չկա) կիրառելի է զրոյական ուղղակի արտանետումների սահմանը:

• Հանածո վառելիքի կամ այլընտրանքային և հանածո վառելիքների խառնուրդի փոխադրման համար նախատեսված տրանսպորտային միջոցները համապատասխան չեն:

</td>
<td>չկա</td>
<td>Ներդրումների նկարագրությունը</td>
</tr>
<tr>
<td rowspan="2">Ցածր արտանետումներ ունեցող տրանսպորտային միջոցների ենթակառուցված քներ</td>
<td>Էլեկտրամեքենաների լիցքավորման կայաններ և էլեկտրամեքենաների հարակից ենթակառուցվածքներ</td>
<td>Բոլոր տեսակի տրանսպորտային միջոցները համապատասխան են (ավտոմեքենաներ, ֆուրգոններ, բեռնատարներ, ավտոբուսներ և այլն)</td>
<td>չկա</td>
<td>Ներդրումների նկարագրությունը</td>
</tr>
<tr>
<td>Ջրածնային ավտոմեքենաների լիցքավորման կայաններ</td>
<td>Բոլոր տեսակի տրանսպորտային միջոցները համապատասխան են (ավտոմեքենաներ, ֆուրգոններ, բեռնատարներ, ավտոբուսներ և այլն)</td>
<td>չկա</td>
<td>Ներդրումների նկարագրությունը</td>
</tr>
</table>



FB_Internal

| | | | | |
|---|---|---|---|---|
| Թափոնների հավաքում և տեղափոխում | Տեսակավորված վերամշակվող նյութերի և կենսաթափոնների առանձին հավաքման և փոխադրման համար նախատեսված տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ և հատուկ ենթակառուցվածքներ | **Ոչ վտանգավոր թափոնների առանձին հավաքմանը և տեղափոխմանն ուղղված ներդրումները համապատասխան են, եթե՝**<br>• Տեսակավորված թափոնները (առանձին կամ միախառնված չափամասերով) հավաքվում են առանձին՝ վերօգտագործման և/կամ վերամշակման համար դրանք պատրաստելու նպատակով,<br>• Առանձին հավաքված տարբեր թափոնների չափամասերի խառնում հավաքման կամ տեղափոխման գործընթացում տեղի չի ունենում:<br>**Համապատասխան ներդրումների օրինակներ՝**<br>• Թափոնների հավաքման սարքավորումներ, օրինակ՝ արկղեր և կոնտեյներներ (ներառյալ ստորգետնյա համակարգերը)<br>• Թափոնները հավաքող և տեղափոխող մեքենաներ<br>• Հարակից տեխնոլոգիական սարքավորումներ և ՏՀՏ հավելվածներ, օրինակ՝ հավաքման երթուղու օպտիմալացման, նետելուն պես վճարման սխեմաների համար<br>• Հարակից ենթակառուցվածքներ թափոնների հավաքման, ժամանակավոր պահեստավորման, համախմբման և փոխադրման համար (օրինակ՝ թափոնների հավաքման քաղաքացիական կենցաղային կենտրոններ, թափոնների փոխադրման կայաններ) և/կամ<br>• Հարակից ենթակառուցվածքներ հավաքող/տեղափոխող մեքենաների պարկերի համար (մեքենաների դեպոներ և օժանդակ օբյեկտներ, ներառյալ լվացման և վերանորոգման, վերալիցքավորման/վերբեռնման կետերը):<br>**Բոլոր դեպքերի համար՝**<br>• Միայն թափոնների հավաքման և տեղափոխման ծառայության գործարկման համար էական նշանակության ենթակառուցվածքներն են համապատասխան:<br>• Հանածո վառելիքի կամ այլընտրանքային և հանածո վառելիքների խառնուրդի փոխադրման համար նախատեսված ենթակառուցվածները համապատասխան չեն:<br>• Վտանգավոր թափոնների հավաքումը և տեղափոխումը համապատասխան չեն (համաձայն ԵՄ-ի Թափոնների ցանկի դասակարգման՝ https://ec.europa.eu/environment/waste/framework/list.htm) | չկա | Ներդրումների և սպասարկվող բնակչության նկարագրությունը (քաղաքային թափոնների դեպքում) |
| **Կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացմանն ուղղված այլ ներդրումներ**<br>*ա) Կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացմանն ուղղված այլ ներդրումները կարող են համապապասխան լինել, եթե դրանք համապապասխանում են ԵՄ Տաքսոնոմիայի Պապվիրակված ակտի Հավելված I-ով[28] սահմանված էապես նպաստելու չափանիշներին, ներառյալ ստորև ներկայացված ոչ սպառիչ ցանկը՝* | | | | |
| Կլիմայական գործողություններ ի այլ ծրագրեր | Կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացմանն ուղղված այլ ներդրումներ | **Էլեկտրաէներգիայի փոխանցում և բաշխում**<br><br>Համապատասխան ենթածրագրերը պետք է համապատասխանեն ԵՄ Տաքսոնոմիայի Պատվիրակված ակտի Հավելված I-ի գլուխ 4.9-ով այս գործունեության համար սահմանված ամբողջական տեխնիկական զննման չափանիշներին:<br>ԵՆԲ-ն կարող է ըստ պահանջի տրամադրել ԵՄ տաքսոնոմիայի կիրառման վերաբերյալ ուղեցույցը: | չկա | Ներդրումների նկարագրությունը |
| Կլիմայական գործողություններ ի այլ ծրագրեր | Կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացմանն ուղղված այլ ներդրումներ | **Շենքերի համար էներգաարդյունավետ սարքավորումների արտադրություն**<br><br>Տնտեսական գործունեությամբ արտադրվում են հետևյալ արտադրանքներից մեկը կամ ավելին և դրանց հիմնական բաղադրիչները[29]՝ | չկա | Ներդրումների նկարագրությունը |

[28] resource.html (europa.eu)
[29] Անհրաժեշտության դեպքում ջերմափոխանցման «U» արժեքը հաշվարկվում է համաձայն կիրառելի ստանդարտների, օրինակ՝ EN ISO 10077-1:2017 (պատուհաններ և դռներ), EN ISO 12631:2017 (կախովի պատեր) և EN ISO 6946:2017 (շենքերի այլ բաղադրիչներ և տարրեր):



FB_Internal

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | a) 1,0 Վտ/մ²Կ-ից ցածր կամ դրան հավասար ջերմափոխանցման "U" արժեք ունեցող պատուհաններ,<br>b) 1,2Վտ/մ²Կ-ից ցածր կամ դրան հավասար ջերմափոխանցման "U" արժեք ունեցող դռներ,<br>c) 0,5 Վտ/մ²Կ-ից ցածր կամ դրան հավասար ջերմափոխանցման "U" արժեք ունեցող արտաքին պատեր,<br>d) 0,3 Վտ/մ²Կ-ից ցածր կամ դրան հավասար ջերմափոխանցման "U" արժեք ունեցող տանիքածածկման համակարգեր,<br>e) 0,06 Վտ/մԿ-ից ցածր կամ դրան հավասար լամբդա արժեք ունեցող մեկուսացնող պրոդուկտներ,<br>f) կենցաղային սարքավորումներ, որոնք Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2017/1369 Կանոնակարգի (ԵՄ) և դրա համաձայն ընդունված Պատվիրակված ակտերի համաձայն ընկնում են էներգաարդյունավետության երկու ամենաբարձր լրակազմված դասերում,<br>g) լուսավորման աղբյուրներ, որոնք թիվ 2017/1369 Կանոնակարգի (ԵՄ) և դրա համաձայն ընդունված Պատվիրակված ակտերի համաձայն ընկնում են էներգաարդյունավետության երկու ամենաբարձր լրակազմված դասերում,<br>h) տարածքների ջեռուցման և կենցաղային տաք ջրի համակարգեր, որոնք թիվ 2017/1369 Կանոնակարգի (ԵՄ) և դրա համաձայն ընդունված Պատվիրակված ակտերի համաձայն ընկնում են էներգաարդյունավետության երկու ամենաբարձր լրակազմված դասերում,<br>i) հովացման և օդափոխման համակարգեր, որոնք թիվ 2017/1369 Կանոնակարգի (ԵՄ) և դրա համաձայն ընդունված Պատվիրակված ակտերի համաձայն ընկնում են էներգաարդյունավետության երկու ամենաբարձր լրակազմված դասերում,<br>j) լուսավորության համակարգերի համար ներկայության և ցերեկային լույսի կարգավորիչներ,<br>k) ԵՄ Տաքսոնոմիայի ՊԱ-ի Հավելված I-ի 4.16-րդ բաժնով նախատեսված տեխնիկական սքրինինգի չափանիշներին համապատասխանող ջեռուցման պոմպեր,<br>l) արևային ստվերարկման կամ արևային կարգավորման գործառույթով ֆասադային և տանիքածածկային տարրեր, ներառյալ այն տարրերը, որոնք աջակցում են բուսականություն աճեցնելուն,<br>m) շենքերի ավտոմատացման և կարգավորման էներգաարդյունավետ համակարգեր բնակելի և ոչ բնակելի շենքերի համար,<br>n) գոտիավորված թերմոստատներ և սարքեր շենքերի էլեկտրաէներգիայի հիմնական բեռնվածքների կամ ջերմային բեռնվածքների խելացի մոնիթորինգի համար, և սենսորային սարքավորումներ,<br>o) կենտրոնական ջեռուցման համակարգերին միացված անհատական տների, ամբողջ շենքը սպասարկող կենտրոնական ջեռուցման համակարգերին միացված անհատական բնակարանների և կենտրոնական ջեռուցման համակարգերի համար ջեռուցման հաշվառման և ջերմաստատիկ կարգավորման արտադրանքներ, ԵՄ Տաքսոնոմիայի ՊԱ-ի Հավելված I-ի 4.15-րդ բաժնով նախատեսված ջեռուցման/հովացման բաշխման գործողությունների պահանջներին համապատասխանող կենտրոնական ջերմափոխանակիչներ և ենթակայաններ,<br>p) արտադրանքներ ջեռուցման համակարգի խելացի մոնիթորինգի և կարգավորման համար, և սենսորային սարքավորումներ: | | |
| Կլիմայական գործողություններ ի այլ ծրագրեր | Կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացմանն | **Ցածր ածխածնային տեխնոլոգիաների (տրանսպորտային միջոցների) արտադրություն**<br>Ներառում է արտադրությունը, վերանորոգումը, շահագործումը, վերազինումը[30], նպատակային նշանակության փոփոխումը կամ արդիականացումը, եթե համապատասխանում է ԵՄ Տաքսոնոմիայի Պատվիրակված ակտի Հավելված I-ի 3.3-րդ բաժնով նախատեսված էապես նպաստելու չափանիշներին: | չկա | Ներդրումների նկարագրությունը |

[30] (j)-ից մինչև (m) կետերի համար վերազինմանն առնչվող չափանիշներն ընդգրկված են ԵՄ Տաքսոնոմիայի ՊԱ-ի Յավելված I-ի 6.9-րդ և 6.12-րդ բաժիններում:



FB_Internal

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ուղղված այլ ներդրումներ | | | |
| | | **Կենսազանգվածի, կենսագազի, կենսահեղուկների և կենսավառելիքների արտադրություն**<br><br>Կենսազանգվածի, կենսագազի, կենսահեղուկների և կենսավառելիքների արտադրությունը կենսանյութերի և կենսաէներգետիկ արդյունաբերության համար համապատասխան է, եթե համապատասխանում է ԵՄ Տաքսոնոմիայի Պատվիրակված ակտի Հավելված I-ի 4.13-րդ բաժնով նախատեսված էապես նպաստելու չափանիշներին և բավարարում է հումքի կայունության պայմանները, ինչպես սահմանված է Փարիզի համաձայնագրին համապատասխանեցման վերաբերյալ սույն Ֆինանսավորման ուղեցույցի բաժին A.2.2-ով: | | |
| Կլիմայական գործողություններ ի այլ ծրագրեր (ոլորտներ և գործողություններ ) | Կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացմանն ուղղված այլ ներդրումներ | **Այլ տեղերում չընդգրկված ցածր ածխածնային տեխնոլոգիաների արտադրություն**<br><br>Ցածր ածխածնային տեխնոլոգիաներն այն տեխնոլոգիաներն են, որոնց նպատակը տնտեսության մյուս ոլորտներում ՋԳ արտանետումների էական կրճատումն է:<br><br>Տնտեսական գործունեությամբ արտադրվում են տեխնոլոգիաներ, որոնք նպատակաուղղված են շահագործման ժամկետի ընթացքում ՋԳ արտանետումների էական կրճատումներին և ցուցաբերում են այդպիսի կրճատումներ՝ շուկայում առկա լավագույն այլընտրանքային տեխնոլոգիաների/արտադրանքի/լուծման համեմատ:<br><br>Շահագործման ժամկետի ընթացքում ՋԳ արտանետումների կրճատումները հաշվարկվում են՝ օգտագործելով Հանձնաժողովի թիվ 2013/179/ԵՄ[31] առաջարկությունը կամ, որպես այլընտրանք, ISO 14067:2018 ստանդարտը[32] կամ ISO 14064-1:2018 ստանդարտը[33]:<br><br>Շահագործման ժամկետի ընթացքում քանակորոշված ՋԳ արտանետումների կրճատումները պետք է հաստատվեն անկախ երրորդ անձի կողմից: | չկա | Ներդրումների նկարագրությունը |
| Կլիմայական գործողություններ ի այլ ծրագրեր (ոլորտներ և գործողություններ ) | Կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացմանն ուղղված այլ ներդրումներ | **Շենքերի էներգաարդյունավետովության առնչվող մասնագիտական ծառայություններ**<br><br>Այս գործողությունը բաղկացած է հետևյալ կետերից որևէ մեկից՝<br><br>(a) շենքերի էներգաարդյունավետության բարելավման հետ կապված տեխնիկական խորհրդատվություններ (էներգիայի վերաբերյալ խորհրդատվություններ, էներգիայի սիմուլյացիաներ, ծրագրի կառավարում, էներգաարդյունավետության պայմանագրերի կազմում, հատուկ նախատեսված վերապատրաստումներ),<br>(b) հավատարմագրված էներգիայի աուդիտներ և շենքերի էներգաարդյունավետության գնահատումներ,<br>(c) էներգետիկ կառավարման ծառայություններ,<br>(d) էներգաարդյունավետության պայմանագրեր, | չկա | Ներդրումների նկարագրությունը |

[31] Հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 9-ի թիվ 2013/179/ԵՄ առաջարկություն շահագործման ժամկետի ընթացքում արտադրանքների և կազմակերպությունների բնապահպանական ցուցանիշների չափման և կոմունիկացման ընդհանուր մեթոդի օգտագործման վերաբերյալ (ՊՏ Օ 124, 4.5.2013թ., էջ 1):
[32] ISO ստանդարտ 14067:2018, Ջերմոցային գազեր — Ապրանքների ածխածնի հետք— Քանակորոշման պահանջները և ուղեցույցները՝ https://www.iso.org/standard/71206.html .
[33] ISO ստանդարտ 14064-1:2018, Ջերմոցային գազեր — Մաս 1. Կազմակերպության մակարդակով ուղղորդում ջերմոցային գազերի արտանետումների և հեռացումների քանակորոշման և հաշվետվության մասով՝ https://www.iso.org/standard/66453.html



FB_Internal

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | (e) էներգետիկ ծառայության ընկերությունների (ԷԾԸ-ներ) կողմից մատուցվող էներգետիկ ծառայություններ: | | |
| Կլիմայական գործողություններ ի այլ ծրագրեր (ոլորտներ և գործողություններ ) | Կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացմանն ուղղված այլ ներդրումներ | **Նոր առանձին գործող էներգաարդյունավետ հարմարանքներ կամ սարքավորումներ, կամ դրանց փոխարինումը**<br><br>• Որևէ տեղ չընդգրկված՝ նոր կամ փոխարինող սարքավորումներ, որոնք ցուցաբերում են զուտ էներգիայի սպառման, ռեսուրսների սպառման կամ CO2հ արտանետումների զգալի կրճատում:<br>• Այս գործողությունը պետք է օգտագործի առկա լավագույն տեխնոլոգիան, կամ էներգաարդյունավետությամբ համապատասխանի կամ գերազանցի երկրի համապատասխան տեխնոլոգիական հենանիշներին:<br>• Նախկինում հանածո վառելիք այրող հարմարանքների կամ սարքավորումների էլեկտրաֆիկացումը համապատասխան է առանց զուտ էներգիայի սպառման, ռեսուրսների սպառման կամ CO2հ արտանետումների էական նվազումը ցույց տալու անհրաժեշտության, եթե էլեկտրաֆիկացումը համեմատաբար հազվադեպ է տվյալ տիպի հարմարանքի կամ սարքավորման համար:<br><br>**Համապատասխան օրինակներից են՝**<br><br>• Այրման շարժիչներով ամբարձիչների փոխարինումը ջրածնի կամ լիթիումի մարտկոցներով աշխատող զրոյական արտանետումներով ամբարձիչներով, կամ<br>• VII դասի (ամբարձիչով ամենագնաց բեռնատարներ) ցանկացած զրոյական արտանետումներով ամբարձիչները,<br>• զրոյական արտանետումներով շինարարական սարքավորումները: | | |
| **Կլիմայի փոփոխությանը հարմարվողականությանն ուղղված ներդրումներ** | | | | |
| Կլիմայական գործողություններ ի այլ ծրագրեր (ոլորտներ և գործողություններ ) | Կլիմայի փոփոխությանը հարմարվողականությ անն ուղղված ներդրումներ | **Գյուղատնտեսությունում կլիմայադիմակայուն ներդրումների օրինակներ՝**<br>• երաշտադիմացկուն մշակաբույսեր/մշակաբույսերի նոր տարատեսակներ<br>• մշակաբույսերի պահեստավորում<br>• մշակաբույսերի աէրոպոնիկ արտադրություն<br>• թվային կամ այլ հավելվածներ եղանակի և հիդրոլոգիական մոնիթորինգի ու կանխատեսման համար<br>• եղանակի մոնիթորինգ և կանխատեսում<br>• ճնշումային ոռոգման տեխնոլոգիաներ՝ ցայտաջրմուղային, կաթիլային և այլ բարձրարդյունավետ համակարգերի օգտագործմամբ<br>• հողերի բարձր ճշգրտությամբ լազերային համահարթում<br>• ջերմաստիճանի կարգավորում կենդանիների համար<br>• վերը ներկայացվածին առնչվող թվային և այլ հավելվածներ<br><br>**Կլիմայադիմակայուն ներդրումների օրինակներ, որոնք ավելացնում են ջրային ռեսուրսների դիմակայունությունը/ջրի առկայությունը՝**<br>• Ջրի կուտակում և հավաքում<br>• Ջրախնայող տեխնոլոգիաներ (խելացի ջրաչափեր, ճնշումը կարգավորող տեխնոլոգիաներ) | չկա | Ներդրումների նկարագրությունը |



FB_Internal

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | • Ջրի մակարդակի մոնիթորինգ<br>• Հիդրոլոգիական մոդելավորում և կանխատեսում<br>• Վերը ներկայացվածին առնչվող թվային կամ այլ հավելվածներ<br><br>**Կլիմայադիմակայուն ներդրումների օրինակներ, որոնք ավելացնում են առափնյա ենթակառուցվածքների դիմակայունությունը՝**<br>• Գեոսինթետիկ նյութեր ռելիեֆը կայունացնելու համար<br>• Փոթորկի մեծ ալիքի և հողմապտույտների/թայֆունների/ցիկլոնների ավելի լավ կանխատեսում<br>• Վաղ ազդարարման համակարգեր՝ ջրհեղեղների ռիսկերը նվազեցնելու նպատակով<br>• Կլիմայի փոփոխությանը հարմարվողականության բանականություն և անալիտիկա<br>• Հետազոտություններ չմշակված ծովային տվյալների հավաքման և տրամադրման համար<br>• Կլիմայական ռիսկերի քարտեզագրում<br>• Վերը ներկայացվածին առնչվող թվային կամ այլ հավելվածներ<br><br>**ՏՀՏ-ում կլիմայի փոփոխությանը դիմակայման ներդրումների օրինակներ՝**<br><br>• Հաղորդակցության տեխնոլոգիաներ եղանակին-կլիմային առնչվող տեղեկատվության տարածման համար<br><br>**<u>Կլիմայի փոփոխությանը հարմարվողականությանն ուղղված այլ ներդրումներ</u>**<br><br>• Ներդրումները պետք է հակազդեն կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելիության հատուկ համատեքստին և համապատասխանեն հարմարվողականության ներքո համապատասխան ծրագրերի կամ բաղադրիչների վերհանման եռաքայլ գործընթացին http://www.eib.org/attachments/documents/mdb_idfc_adaptation_common_principles_en.pdf :<br>• Կլիմայի փոփոխությանը հարմարվողականության մյուս ներդրումների մասով Կլիմայի գործողությունների համապատասխանությունը պետք է նախապես հաստատվի ԵՆԲ-ի կողմից՝ նախքան տեղաբաշխումը կատարելը: | | |
| **Այլ կանաչ նախագծեր** | | | | |
| Այլ կանաչ նախագծեր (ոլորտներ և գործունեություն) | Այլ կանաչ նախագծեր՝ կենսաբազմազանություն | **Կայուն և/կամ օրգանական առաջնային մշակաբույսերի արտադրություն**<br>• Ներդրումներ հավաստագրված տնտեսվարողների կողմից իրականացվող առաջնային մշակաբույսերի կայուն և/կամ օրգանական արտադրության գործողություններում կամ ներդրումներ օրգանական և/կամ կայուն հավաստագրված արտադրության անցնելու նպատակով բիզնեսին աջակցություն ցուցաբերելու համար:<br>• Հավաստագրումը կարող է ներառել միջազգային և ԵՄ օրգանական/կենսաբանական գյուղատնտեսության հավաստագրումը, Կայուն գյուղատնտեսության/ծկնաբուծության հավաստագրումը (օրինակ՝ Rainforest Alliance-ը), REDcert2-ը, այլ՝ ըստ անհրաժեշտության:<br>• Գործողությունները չպետք է հանգեցնեն բնական կենսամիջավայրերի (մասնավորապես՝ բարձր կենսաբազմազանության արժեք ունեցող վայրերի) փոխակերպմանը, մասնատմանը կամ ավելի ակտիվ օգտագործմանը:<br>**Կենդանիների և ջրային կուլտուրաների կայուն և/կամ օրգանական արտադրություն**<br>• Ներդրումներ հավաստագրված տնտեսվարողների կողմից իրականացվող կենդանիների կայուն և/կամ օրգանական արտադրության մեջ (օրինակ՝ անասնապահություն, ջրային կուլտուրաների մշակում), կամ | չկա | Ներդրումների նկարագրությունը |



FB_Internal

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ներդրումներ օրգանական և/կամ կայուն հավաստագրված արտադրության անցնելու նպատակով բիզնեսին աջակցություն ցուցաբերելու համար:<br>• Հավաստագրումը կարող է ներառել միջազգային և ԵՄ օրգանական/կենսաբանական գյուղատնտեսության հավաստագրումը, Կայուն գյուղատնտեսության/ձկնաբուծության հավաստագրումը (օրինակ՝ Rainforest Alliance-ը, Aquaculture Stewardship Council-ը), REDcert2-ը, այլ՝ ըստ անհրաժեշտության:<br>• Գործողությունները չպետք է հանգեցնեն բնական կենսամիջավայրերի (մասնավորապես՝ բարձր կենսաբազմազանության արժեք ունեցող վայրերի) փոխակերպմանը, մասնատմանը կամ ավելի ակտիվ օգտագործմանը:<br><br>**Բնության ժառանգության և էկոհամակարգահեն զբոսաշրջության պաշտպանություն, զարգացում և խրախուսում**<br>• Ներդրումներ պահպանության կամ վերականգնման ծրագրում/պլանում ներառված փոփոխված/դեգրադացված էկոհամակարգերում և բնական կենսամիջավայրերում էկոզբոսաշրջահեն գործողությունների խթանման գործում:<br><br>**Կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների պահպանությանն առնչվող տեխնոլոգիաների արտադրություն**<br>• Կենսաբազմազանության պահպանությանն առնչվող այնպիսի արտադրանքների, հիմնական բաղադրիչների և նոր տեխնոլոգիաների արտադրություն, որոնք զգալիորեն նպաստում են կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների վրա գործունեության այլ տեսակների ճնշումը նվազեցնելուն կամ անմիջականորեն բարելավում են շրջակա միջավայրի վիճակը՝ շուկայում գործող լավագույն այլընտրանքային տեխնոլոգիաների/արտադրանքի/լուծման համեմատ:<br>• Կենսապեստիցիդների, կենսակատալիզատորների, բույսերի կենսատեխնոլոգիական լուծումների արտադրություն՝ գոյություն ունեցող ագրոքիմիկատներին փոխարինելու նպատակով:<br>• Արևադարձային փայտանյութի կայուն և ծախսարդյունավետ այլընտրանքի արտադրություն:<br>• Տեսակների կենսամիջավայրերի մոնիթորինգի համակարգի արտադրություն: | | |
| Այլ կանաչ նախագծեր (ոլորտներ և գործունեություն) | Այլ կանաչ նախագծեր՝ աղտոտման կանխարգելում և վերահսկում | **Աղտոտման կանխարգելմանը և վերահսկմանն առնչվող ներդրումներ տնտեսական գործունեությունում**<br>• Ներդրումներ միջոցառումներում կամ արտադրության վերջնական փուլի ազդեցության մեղմացման տեխնոլոգիաներում, որոնք նվազեցնում են տնտեսական գործունեության աղտոտիչների արտանետումները դեպի օդ, ջուր և հող (օրինակ՝ մշակաբույսերի առաջնային արտադրություն, կենդանիների առաջնային արտադրություն, անտառտնտեսություն, հողօգտագործում, ձկնաբուծարաններ, ջրային կուլտուրաներ, մշակման և արտադրական օբյեկտներ, լոգիստիկա և մանրածախ վաճառք): Ներդրումները պետք է հանգեցնեն ընթացիկ արդյունաբերական ստանդարտներից, օրինակ՝ BAT մակարդակից, կամ, ըստ անհրաժեշտության, իրավական պահանջներից այն կողմ արտանետումների զգալի նվազեցման:<br>• Ներդրումներ արհեստական պեստիցիդների, պարարտանյութերի և հակաբիոտիկների զգալի նվազեցման և աստիճանական դուրսմղման մեջ:<br>• Ներդրում օդի որակի բարելավման համակարգում:<br>• Ներդրումներ բնակելի վայրերում կամ դրանց մերձակայքում աղմուկի նվազեցման մեջ (իրավական պահանջների շրջանակից այն կողմ):<br>• Ներդրումներ աղտոտումը նվազեցնող մեքենասարքավորումներում:<br><br>**Աղտոտումը կանխարգելող տեխնոլոգիաների արտադրություն** | չկա | Ներդրումների նկարագրությունը |



FB_Internal

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | • Աղտոտումը կանխարգելող և վերահսկող այնպիսի արտադրանքների, հիմնական բաղադրիչների և նոր տեխնոլոգիաների արտադրություն, որոնք հանգեցնում են տնտեսության այլ ոլորտներում աղտոտիչների արտանետման զգալի կրճատումների:<br>• Կիրառելի սարքավորումները կամ տեխնոլոգիաները պետք է կանխարգելեն կամ նվազեցնեն գործունեության այլ տեսակներից արտանետումները օրենքով սահմանված սահմանից այն կողմ (աղմուկի նվազեցումը ներառված է) կամ ցույց տան շուկայում գործող լավագույն այլընտրանքային տեխնոլոգիաների/արտադրանքի/լուծման համեմատ աղտոտման առավել բարձր վերահսկողություն երրորդ անձի կողմից հաստատված ճանաչելի ստանդարտի հիման վրա: | | |
| Այլ կանաչ նախագծեր (ոլորտներ և գործունեություն) | Այլ կանաչ նախագծեր՝ ջուր | **Ջրամատակարարման ենթակառուցվածքների արդիականացում և վերականգնում**<br><br>Սա կարող է ներառել ջրամատակարարման ենթակառուցվածքների, մասնավորապես՝ արտադրության/մաքրման, փոխադրման, պահեստավորման, բաշխիչ ենթակառուցվածքների, միացումների, հենակետային խողովակների, չհաշվառված ջրի (ՉՀՋ) գործողությունների, պահանջարկի կառավարման, չափման և այլնի արդիականացումը և վերականգնումը (ներդրումները ջրամատակարարման նոր համակարգերում կամ այդ համակարգերի ընդլայնման մեջ համապատասխան չեն):<br><br>**Քաղաքային կեղտաջրերի ենթակառուցվածքների կառուցում, ընդլայնում, արդիականացում և վերականգնում և կեղտաջրերի մաքրման գործողություններ**<br><br>Գործողությունը պետք է համապատասխանի Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին հրահանգով սահմանված պահանջներին/շեմերին:<br><br>**Ջրի արդյունավետությանը և ջրախնայողությանն ուղղված բարելավումներ**<br><br>• Ներդրումները պետք է հանգեցնեն նոր գործընթացների/տեխնոլոգիաների արդյունքում կամ (i) ներդրանքների կրճատմանը, կամ (ii) կորուստների զգալի նվազեցմանը:<br>• Սարքավորումներում կատարվող ներդրումների դեպքում ներդրումները պետք է փոխարինեն իրենց օգտակար ծառայության ժամկետի ավարտին չհասած աշխատող սարքավորումներին կամ արդիականացնեն դրանք:<br><br>**Համապատասխան ներդրումների օրինակներ՝**<br>• Նոր տեխնոլոգիաներ, որոնք ապահովում են ջրօգտագործման զգալի նվազեցում/ջրի արդյունավետության բարձրացում սովորական ընթացիկ ներդրման շրջանակից դուրս<br>• Ճշգրիտ ոռոգման միջոցառումներ<br>• Հավաստագրման սխեմայի հետ համապատասխանության արդյունքում իրականացվող միջոցառումներ<br>• Անձրևաջրերի հավաքում հետագա օգտագործման համար<br>• Կեղտաջրերի վերաօգտագործում/կենցաղային կեղտաջրերի մաքրում հետագա օգտագործման համար, եթե ապահովվել է համապատասխանությունը համապատասխան կանոնակարգին, օրինակ՝ Ջրօգտագործման նվազագույն պահանջների մասին թիվ (ԵՄ) 2020/741 կանոնակարգին:<br>• Շենքերում/կառույցներում ներառված բնության վրա հիմնված լուծումներ կամ փոքր ազդեցություն ունեցող տեխնոլոգիաներ՝ ջրի պահպանումը, օգտագործման արդյունավետությունը և վերաօգտագործումը բարելավելու և հեռացումը նվազեցնելու նպատակով: | չկա | Ներդրումների նկարագրությունը |



FB_Internal

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | **Դրենաժային/հողմաջրերի/անձրևաջրերի վերահսկմանը և կառավարմանն ուղղված բարելավումներ**<br>Ներդրումներ այնպիսի միջոցառումների և գործընթացների իրականացման մեջ, որոնք զգալիորեն բարելավում են գյուղատնտեսական, անտառտնտեսության, հողօգտագործման և արտադրական օբյեկտներում դրենաժի և հողմաջրերի ներծծման և անձրևաջրերի կառավարման ընթացիկ իրավիճակը:<br><br>**Համապատասխան ներդրումների օրինակներ՝**<br><br>• Ներդրումներ այլապես հերմետիկ մակերեսներից անձրևաջրերի ներծծումը մեծացնելու մեջ (օրինակ՝ ջրատար շերտի լցավորում խոնավեցված տորֆով և մշակաբույսերի մշակում):<br>• Համակցված կոյուղային/հողմաջրերի համակարգից անցում առանձին համակարգերի:<br>• Դրենաժային համակարգ:<br>• Ջրի պահման ենթակառուցվածքներ:<br>• Անձրևաջրերի վերահսկման միջոցառումներ ներծծումը բարելավելու նպատակով:<br>• Ջրբաժանի կառավարման բարելավում:<br><br>**Ջրի կառավարման, ջրօգտագործման արդյունավետության և ջրի վերաօգտագործման տեխնոլոգիաների արտադրություն**<br><br>Արտադրական գործունեություն, որը նախատեսված է ջրի խելացի կառավարման, ջրի ավելի լավ խնայողության, պահպանման և արդյունավետ օգտագործման տեխնոլոգիաների կամ այնպիսի տեխնոլոգիաների արտադրության համար, որոնք բարձրացնում են ջրի որակը, ինչը հանգեցնում է տնտեսության այլ ոլորտներում ջրօգտագործման զգալի արդյունավետությանը, ջրի խնայողությանը և ջրի որակի պահպանմանը:<br><br>Կիրառելի սարքավորումները կամ տեխնոլոգիաները պետք է դրսևորեն շուկայում գործող լավագույն այլընտրանքային տեխնոլոգիաների/արտադրանքի/լուծման համեմատ ջրօգտագործման առավել բարձր արդյունավետություն, ջրի ավելի մեծ խնայողություն, ջրի որակի ավելի լավ պահպանում՝ երրորդ անձի կողմից հաստատվող ճանաչված ստանդարտի հիման վրա: | | |
| Այլ կանաչ նախագծեր (ոլորտներ և գործունեություն) | Այլ կանաչ նախագծեր՝ շրջանաձև տնտեսություն | **Արտադրանքը որպես ծառայություն ներկայացնելու, վերաօգտագործման և համատեղ օգտագործման մոդելներ**<br><br>Ներդրումներ արտադրանքը որպես ծառայություն ներկայացնելու, վերաօգտագործման և համատեղ օգտագործման մոդելներում, որոնք տալիս են շրջանաձև տնտեսության ռազմավարությունների հնարավորություն: Սա, ի թիվս այլ սխեմաների, կարող է հիմնվել լիզինգի, օգտագործման չափով վճարման, բաժանորդագրության կամ ավանդների վերադարձի սխեմաների վրա:<br><br>Պետք է բավարարվի հետևյալ երեք չափանիշներից առնվազն մեկը՝<br><br>• Ապրանքներն նախագծված են շրջանաձև օգտագործման համար (օրինակ՝ ավելի բարձր դիմացկունություն, մոդուլայնություն, հեշտ ապամոնտաժում և վերանորոգում)<br>• Կանխատեսելի շահագործման համակարգերի օգտագործում, որոնց նպատակը արտադրանքի/ակտիվի օգտակար ծառայության ժամկետը երկարացնելն է (օրինակ՝ ներգրավել տվյալների կառավարման և ՏՀՏ խելացի համակարգեր): | չկա | Ներդրումների նկարագրությունը |



FB_Internal

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | • Դրույթներ օգտակար ծառայության ժամկետի վերջին փուլում գտնվող ապրանքների/ակտիվների վերադարձի և հերթական նորացման/վերանորոգման մասին՝ «որպես նոր» որակի վիճակում հավելյալ շահագործման ժամկետների ներմուծումը հնարավոր դարձնելու համար:<br><br>**Այլ պարագայում դեն նետվելիք ավելորդ կամ օգտակար ծառայության ժամկետի վերջին փուլում գտնվող արտադրանքների, շարժական ակտիվների կամ արտադրանքի բաղադրիչների վերանորոգում, վերասարքավորում, նորացում, նպատակի փոփոխում և վերարտադրություն՝ դրանց վերաօգտագործումը հնարավոր դարձնելու նպատակով**<br><br>• Ենթածրագրեր և ներդրումներ, որոնք նախատեսված են ավելորդ կամ օգտակար ծառայության ժամկետի վերջին փուլում գտնվող ապրանքները դեպի իրենց նախնական օգտագործում վերադարձնելու համար կամ, եթե դրանք այլևս պիտանի չեն իրենց նախնական նպատակի համար, նպատակը փոփոխելու միջոցով դրանք վերաօգտագործման համար հարմարեցնելու համար: Ապրանքները չպետք է նախատեսվեն վերաօգտագործման համար այնպիսի գործունեության մեջ, որը վնասակար է կլիմայի գործողությունների կամ շրջակա միջավայրի կայունության համար, և պետք է պահպանեն իրենց օգտակար ծառայության ժամկետի վերջին փուլում վերականգնվելու և վերամշակվելու կարողությունը:<br>• Ներդրումները չպետք է օգտակար ծառայության ժամկետի երկարացման արդյունքում այլ բնապահպանական նպատակներին զգալի վնաս պատճառեն (օրինակ՝ աղտոտում, կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացում):<br><br>**Շրջանաձև մոդելի օգտագործում. անցում շրջանաձև մոդելների**<br><br>Ենթածրագրեր և ներդրումներ այնպիսի գործընթացներում, որոնք թույլ են տալիս գործող արդյունաբերական արտադրության օբյեկտներում և գյուղատնտեսության մեջ անցում կատարել դեպի շրջանաձև մոդելների ու ռազմավարությունների:<br>Տարբեր տիպի միջամտություններ կարող են համապատասխան լինել. դրանք կարող են իրականացվել ինչպես առանձին-առանձին, այնպես էլ խմբերով՝<br>• Ենթածրագրերը և ներդրումները տալիս են ընդհանուր զուտ ռեսուրսների խնայողության հնարավորություն, այդ թվում՝ ավելի շատ վերաօգտագործման, վերանորոգման, նորացման, վերարտադրության, նպատակի փոփոխման կամ վերամշակման համար արտադրանքների և գործընթացների նախագծման միջոցով՝ առկա իրավիճակի կամ գործունեության սովորական ընթացքի համեմատ:<br>• Ենթածրագրերը և ներդրումները արտադրությունը տանում են դեպի գործող պրակտիկայի համեմատ երկրորդային հումքի ավելի շատ օգտագործման, և ծրագրերը ցույց են տալիս առկա իրավիճակի կամ գործունեության սովորական ընթացքի համեմատ շահագործման ժամկետի դրական բնապահպանական հետքը:<br>• Ծրագիրը ցույց է տալիս թափոնների հոսքերից (որոնք նախկինում կամ սովորաբար դեն են նետվել որպես թափոն) արժեքի պահումը և թափոնների որպես այդպիսին առաջացման կանխումը:<br><br>**Համապատասխան ներդրումների օրինակներ՝**<br>Ողջ գործընթացում վերաօգտագործման, վերանորոգման, նորացման, վերարտադրման, նպատակի փոփոխման գործողություններ: | | |



FB_Internal

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | • Ներդրումներ, որոնք առնչվում են ընկերության բիզնես գործընթացում առաջնային հումքի օգտագործման նվազեցմանը, ներառյալ առաջնային նյութերի փոխարումը երկրորդային/վերամշակված նյութերով, արտադրական գործընթացի մնացորդներով կամ կողմնակի արտադրանքներով:<br>• Ներդրումներ, որոնք փոխարինում են խնդրո առարկա նյութերին կամ հանգեցնում դրանց զգալի նվազեցմանը արտադրանքներում և ակտիվներում: | | |
| **Նախորդ բաժիններում չնշված կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացմանը և կլիմայի փոփոխությանը հարմարվողականությանը ուղղված կամ ցանկացած այլ կանաչ նախագիծ, որը կարող է համապատասխան լինել, նախքան տեղաբաշխումը պետք է նախապես հաստատվի ԵՆԲ-ի կողմից:** | | | | |



FB_Internal